

Պաշկի

Դրամատիկական

համալսարան

891.71


Պ-97




ՀԱՅ ԽՈՎ 280

Ա. ՊՈԻՇԿԻՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ
ՀԱՏՎԱԾՆԵՐ



ՊԵՏԶՐԱՏ • 1934



ՀԱՅԿԱՅԻՆ

ՀԱՅԿԱՅԻՆ
ԴԱՐԱՆ

Դ

ՀԱՅԿԱՅԻՆ



22 JUN 2007

891.71

Ա. ՊՈՒՇԿԻՆ

Պ-97

ար

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

ԽՐԱԽԱՆԻՔԻ ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՀԻՆ
ԾՈՑԱՐՏՆԵՆ ՅԵՎ ՍԱԼՅԵՔԻՆ
ԺԼԱՏ ԱՍՊԵՏԸ
ՔԱՐԵ ՀՅՈՒՐ

Թարգ. ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄՅԱՆ

66824



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

23 JUL 2013

13063

U. Gungl-Ing

Պատ. խմբագիր՝ ~~Ս. Մանուկյան~~
Տեխ. խմբագիր՝ Տ. Մանուկյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Դրամական թիվ № 8440 (Բ)

Հրատ № 2870

Պատվեր № 272

Տիրաժ 10.000



ԽՐԱԽՃԱՆՔ ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱԶԻՆ

1830

Փողոց: Առաա սեղան: Խնճուկքի հավաքված մի քանի
աղամարդ և կին:

Յերիսասարդը

Մեծարգրդ նախագահ: Յես հիշեցնում եմ
Ձեզ այն մարդուն, վոր մեզ շատ լավ ծանոթ եր.
Ում կատակները, զրույցը զվարճալի,
Սուր պատասխանն ու խոսքը խալթական
Յեւ ծաղրաշարժ՝ փքուն իր լրջությամբ
Մեր սեղանին աշխույժ ելին բերում
Յեւ մութը այն ցրում, վոր տարածում է
Այսոր մեր հյուր՝ վարակը
Ե՛ն պայծառաշող խակ մտքերի վրա:
Յերեկ եր դեռ — հանուր մեր կուշտ ծիծաղը
Նրա զրույցն էր մեծարում: Անկարելի յե,
Վոր մոռանանք ուրախ ալս խնճուկքում
Մեր Զակսընին հիշել: Ահա նրա գահույքը
Այսոր թափուր և. կարծես սպասում է
Զվարճախոսին, — բայց նա իջել է արդ
Մահասարսուռ ու ցուրտ վերջին կայանը...
Թեպետ ահա — լեզուն էն պերճախոս
Դեռ չի մնջել հավետ մըթին գերեզմանում,
Բայց վողջ ենք դեռ շատերըս, և բնավ ել
Վրդտանալու առիթ չունինք այսուր:
Իմ կոչն և ձեզ — հիշել նըրա անունը
Դավաթների խնդուն զարկով — իբրեւ թե
Ապրում է նա մեր մեջ...

Նախագահը

Նա առաջինը

Թողեց շրջանը մեր: Ուստի և լուռ
Խմենք նըրա պատվին...

Յերիսասարգը

Այդպես լինի:

Բոլորը լուռ խմում են

Նախագահը

Դո՛ւ ձայնը, սիրելիդ իմ, կատարում ե
Վայրի անթերությամբ մեր հին տաղերը, —
Յերգիր մեղ, Մերի, լերդ մի թախծալի,
Վոր մենք ապա ավել խելակորույս
Դիմենք մեր խնդության, ինչպես վոր նա.
Ում այս յերկրից տեսիլ մի անջատել եր:

Մերին (յերգում է)

Ժամանակ կար — անխըռով եր
Մեր լերկիրը լիառատ,
Սուրբ տաճարը կիրակնորը
Լեփլեցուն եր, մոմազարդ:
Դպրոցում մեր մանուկները
Յերգում ելին խընդադին
Յեվ շողել ելին դաշտերը
Սուր մանգաղն ու գերանդին:

Այժմ լուռ ե մեր տաճարը,
Խուլ ե դուռը դըպրոցի,
Զուր կծղել են բերքն ու արտը,

Թավ պուրակը ամալի:

Յեվ մեր գուղն՝ ինչ կացարան մի
Հրկիզված — կանգնել ե խուլ,
Վողջը մունջ — սոսկ զամբարանն ե,
Վոր ժըխուր ե և անկուշտ:

Անդադրում մեռելաթաղ ե,
Լաց ու վողբ ապրողների
Յեվ աստծուց հացում են բարձր —
Տալ հանգիստ վոսկորներին:
Ժամ առ ժամ նեղվում ե տեղը,
Յեվ դազաղ ու գերեզման
Խիտ շարքով ահա սխմվել են
Վախեցած հոտի նըման:

Յեթե վաղ մի գերեզման ել
Վիճակված ե իմ գարնան,
Դո՛ւ, վոր իմ սրտի սիրածն ես
Յեվ ում սերը — ինձ հրձկանք, —
Աղաչում եմ — մոտ չըգաս դու
Զեննիիդ մարմինն հավետ, —
Զամբուրես պաղած շրթունքը
Յեվ հեռվից լոկ տուր հրաժեշտ:

Իսկ հետո լըքիր մեր գուղը
Յեվ գնա հեռու մի վայր,
Ուր հոգուդ այրող մոմուռը
Կը մեջեր, կը մեղմանար:
Յերբ ապա կանցի ի վարակը,
Յեկ ալցի շիրիմիս անահ,
Իսկ քո Զեննին հիշատակդ
Հավիտյան չի մոռանա...

Նախագահը

Ո, շնորհակալ եմք, մտախոհող Մերի,
 Գո սրտաշարժ չերգիդ համար — պատվով քեզ...
 Ժանտախտը նույն թերևս այցելիլ եր
 Հնում ել ձեր դաշտերն ու բլուրները
 Յեվ վողբակոծ լավում եր հառաչանքը
 Փրփրավարար աչքն ջրերի ակիւն,
 Վոր այժմ հեղ ու ժառախինդ հոսում են
 Վարի դրախտում քո հայրենի չերկրի...
 Յեվ մահաշունչ տարին, վոր խորտակել եր
 Այնքան խիզախ, բարի և թանկ զոհեր,
 Մի հիշատակ հազիվ այսօր թողել ե
 Գո հովվական մի ինչ վոր պարզ չերգում՝
 Թախծոտ ու հաճելի... Ո, վոչ: Այնքան
 Վոչինչ մեզ չի խոցում ուրախ ժամին,
 Վորքան սրտով կրկնած մի յերգ տխուր:

Մերի

Ո, չերանի՜ հնչեր հավետ իմ չերգը
 Սոսկ հայրական խղճուկ տան պատերում...
 Ծնողներիս հաճույք եր ինձ լըսելը:
 Յեվ ինքըս ինձ, թըվում ե, ունկընդրում եմ
 Յերգ ասելիս մեր խրճիթի շեմքին —
 Իմ ձայնն այնքան գրավիչ եր աչքն որերը.
 Անմեղու.թյունն եր ջինջ չերգում...

Լուիզան

Արդեն իսկ

Յերգերն այդ հնացել են: Բայց դեռ կան
 Պարզուկ սրտեր, նըրանք իսկույն փափկում են

Կույր հավատից դեպի կընոջ արցունքը:
 Կարծում ե Մերին — իր թացուկ հաչացքը
 Անպարտելի յե: Բայց թե իր ժըպիտն ել
 Այդքան զորեղ կարծեր, — անվերջ նա չերևի
 Պիտի խնդար: Գովեց մեր վախիճամբ
 Հյուսիսային լացկան սիրուններին, —
 Յեվ սա ել վողբն իր չերկարեց: Ատում եմ
 Շոտլանդական այս վարսերի դեղինը:

Նախագահը

Լըսեք... Անիմներ չդիւրդ եմ չեա լում...

Անցում ե դիակներով լիբ մի սայլ, վորը բշում ե մի անգր: Լու-
 իզան ուշաքափվում ե:

Ահա... Լուիզան վատ ե: Նա, թվում եր,
 Հեղվիցն իր դատելով՝ սրտոտ ե և տըի:
 Ալդպես ե բայց. Թույլից անզոր ե չարը,
 Յեվ անը միշտ կա կըքահուկը սրտում...
 Դու, Մերի, ջուր ցողիւր դեմքին... Ել բնով ե:

Մերի

Ո, քույրըդ իմ վշտի և ամոթի,
 Հանգիստ առ իմ կըքքին...

Լուիզան ուշի գալով

Դաժան մի դե եր.

Կանգնել եր սե, սպիտակ ելին աչքերը...
 Կանչում եր ինձ նա իր սայլակն: Այնտեղ
 Թափված ելին դիերը և լավում եր.
 Նրանց խրիթին և սոսկալի թոթովը...
 Ասեք ինձ — դա չերա՞ղ եր. թե ի՞նք
 Անցել ե այդ սալակը...

Յերիսասարդը

Դե, Լուիզա,

Աշխուժացիր. թեպետ մեր վողջ փողոցը
Դաժան մահից լռին մի ապաստան ե,
Անխռովելի խնճուղքների կայան,
Սակայն, գիտես, այդ դիակիր սալակը
Կարող ե միշտ շրջել ամենուրեք —
Մենք արգելել այդ չենք կարող: Լը իր ինձ,
Դու, վախճված, — կանխիր իդուր վեճերը
Յեվ կանացի փափուկ սրտի մարումը, —
Յերգիր մեզ դու աշխուժ ու անկաշկանդ
Մի չերդ՝ հեռու շողանդական թախծից.
Հրափրփուր դավաթների ծընունդ
Բաքոսական ըմբոստ ու վառ մի չերդ:

Նախագահը

Նրման յերգ չգիտեմ, սակայն՝ կերգեմ ձեզ հիմնը
Յեա ժանտախտի պատվին. գրել եմ այն
Անցյալ գիշեր, չերք մենք բաժանվեցինք,
Տարորինակ հակում եր դեպ հանգերը՝
Կյանքումըս դեռ չապրած: Լըսեցեք ինձ այժմ —
Խուպոտ իմ ձայնը այդ չերդին պատշաճ ե:

Դաշերը

Հիմն ժանտախտին: Լսեք ապա: Այդ լավ ե,
Հիմն ժանտախտին: Լըսում ենք, Bravo! Bravo!

Նախագահը յերգում ե

Յերք վոր ձմեռը մեծապոր,
Իբրե խըրոխտ մի առաջնորդ,

Իր ձյուն - ցրտի բրդեղ վաշտերն ե
Հանում մեր դեմը անվարան, —
Հանդեպ ճայթում են ոճախները,
Յեվ քաղցր ե քեֆը ցուրտ ձմրան:
Ժանտախտն — անեղըն թագուհին —
Չոքել ե այժմ մեր բկին,
Առատ հնձից նա անհագուրդ ե,
Շիրիմնային իր սառն բահով
Որ ու գիշեր զարկում ե դուռը...
Արդ, ի՞նչ անենք, ոգնենք ինչո՞վ:

Ինչպեա ձմրան չարությունից,
Փակվենք այսոր ել ժանտախտից, —
Կրրակ վառենք, լցնենք զավերը,
Պարում թող միաքը խորտակվի,
Յեվ լերք թնդան ուրախ յերգերը,
Դովենք մեծ փառքը ժանտախտի:

Կա թովչություն անեղ մարտում,
Յեվ անդընդի մռայլ յեղրում,
Յեվ ովկիանում, յերք մութ ալիքը
Ջարհուր են, խոլ ե ամհին,
Յեվ արաբյան մըրրիկի մեջ,
Յեվ պաղ շնչումը ժանտախտի:

Ամենն, ինչ մահ ե ըսպառնում,
Անլույժ հըմայք ե ներշնչում
Մահկանացու նկուն սրտին մեր —
Անմահության թերեա գրավ,
Յեվ բախտավոր ե, ով նեղին ել
Ապրեց այդ հմայքն ու տիրացավ:

Ուրեմն — փառքդ մեծ, ժանտախտ,
 խաղար շիրմից չըկա մեղ ահ,
 Մեզ չի խռովի և քո կոչումը, —
 Գավերն ի մի, ահա, յերգով
 Ըմպում ենք վարդ — կուսի շնչումը —
 Թերեա լի քո վարակով:

Մտնում ե ծեր քահանայ

Քահանայ

Քեք անասոված և անասոված խենթեր,
 Ձեր խնձույթով և յերգերով անարգ
 Ծաղրում եք դուք մահվան ձեռքով մեր շուրջը
 Ամենուրեք սրփռած անդորրը:
 Սոսկումի մեջ տըխուր թաղումների
 Գունատ դեմքերն իմ շուրջը — աղոթում եմ
 Յես մահատառն, իսկ ձեր աչս դարչ հրճվանքը
 Դադաղների հանգիստն ե խռովում
 Յեվ սասանում սառն հողը դիրբի:
 Յեթե կանանց և ծերերի աղոթքը
 Յեղբայրական շիրմը չը սրբեր, —
 Պիտի թրվար աչսժամ, թե չար դեերն են
 Հաշում կորած հոգին անասովածի
 Յեվ քրքիջով քաշում են սև դժոխքը:

Մի քանի ձայն

Վարպետորեն խոսեց սա դժոխքից:
 Գնա, ծերուկ: Գնա քո ճանապարհը:

Քահանայ

Մեր մեղքերի համար խաչված փրկչի
 Սուրբ արյունով ահա ձեզ թախանձում եմ —

Ընդհատեցեք ձեր հրեշտիկ խրախճանքը,
 Յեթե յերկնում տեսնիլ եք փափագում
 Ձեր սիրեցյալ սրտերը մահատար, —
 Յրվեք տնները ձեր...

Նախագահը

Տները մեր տխուր են,
 Մինչ կյանքը վառ սիրում ե խնդությունը:

Քահանայ

Այդ դժու լես, վախի՛ղձ: Արդյո՞ք հենց նա,
 Վոր ծնկաչոք՝ հաղիվ յերեք շաբաթ ե
 Դիակն եր մոր գրկել ու հեկեկում
 Յեվ վողբաձայն ծեծում նըրա շիրմը...
 Կարծում ես դու, թե նա ել չի՞ հեծում,
 Ել դառն չի՞ հեծում բարձրում յերկնի,
 Խրախճանող վորդուն իր նախկինով
 Յոփ խնձույթում՝ սարսած խելառ յերգիցը
 Սուրբ աղոթքի և խոր ցավի սլահին...
 Գընանք ինձ հետ:

Նախագահը

Ինչո՞ւ լես դու դալիս
 Յեվ խռովում ինձ, Ձեմ կարող. չ պետք ե
 Քեզ հետեմ յերեք. — ալստեղ կապում են ինձ
 Հուսաբեկումն ու դառն հիշատակ մի:
 Գիտակցությունն իմ ապրեն վարքի
 Յեվ սև սարսափն աչս պաղ դատարկության,
 Վոր ինձ ախոր իմ տանն սպասում ե,
 Յեվ նորությունն աչս խելագար քեֆի,
 Յեվ դավաթի աչս թույնը բարեբեր:

Յե՛վ մոլորված, բայց քաղցր եակի
Դրգվտնքը ջերմ (ներքի ինձ, տեր աստված իմ)..
Հստվերն իմ մոր ինձ այստեղից — ել ուշ ե —
Անգոր ե դուրս բերել... Ահա, լսում եմ
Քո ձայնը ինձ կանչող... Գիտեմ, ճշգնում ես
Փրկել ինձ... Զուր, ծերուկ... դնա խաղաղությամբ,
Սակայն, անեծք նրան, ով հետևի քեզ...

Ետեք

Bravo! Bravo! Ապրի մեր նախագահը:
Այս ել քարոզ քեզ: Դե, կորի, կորի:

Քահանան

Մատիլդեյիդ արդար հոգին կանչում ե:

Նախագահ (վստի կանգնելով)

Յերդվիր ինձ արդ դեպի յերկինք պարզած
Քո դողդոջուն, գունատ ձեռքով — թողնել
Հավետ ֆեջած անունը դադաղում...
Ո, թե լիներ հնար մի տեսարանն այս
Սքողել նրա անմահ աչքից... Յերբեմբն
Կարծում եր ինձ մաքուր նա, վեհ, ազատ,
Յե՛վ իմ գրկում ապրում եր իր դրախտը...
Յես հուր: Լուսո մաքուր զավակ, տեսնում եմ
Քեզ այն բարձրում, վորտեղ կորած հոգին իմ
Ել չի հասնի յ բերք...

Կանաչի ձայն

Նա խելագար ե —

Թաղած կընոջ մասին ե դառանցում:

Քահանան

Գնանք, գնանք...

Նախագահ

Հանուն աստծո, ո, հալը իմ,

Թող ինձ մենակ...

Քահանան

Աստված քեզ ոգնական,

Ներիր, վորդիս...

Գնում ե: Խրախանքը շարունակվում ե: Նախագահը մեծությամբ խորա-
տուգված իր ծանր մտերի մեջ:



Մ Ո Յ Ա Ր Տ Ն Յ Ե Վ Ս Ա Լ Յ Ե Ր Ի Ն

1830

ՊԱՏԿԵՐ I

Սենյակ

Սալիերի

Ասում են—աշխարհում ամեն ինչ անարդար է,
 Բայց չե՞ս արդար չերկիրնքն ել՝ Ինձ համար
 Այնքան հաստատ է այս, ինչ պարզ մի գամմա:
 Ծնվել եմ յես սիրով դեպի ա. վիստը.
 Դեռ մի մանուկ ուշիմ, յերբ յերգեհոնը
 Հնչում եր բարձր հին մեր տաճարում,
 Լըսում եյի և ըզմալվում, — արցունքը
 Թրջում եր ջերմ աչքերն իմ ակամա:
 Ժըխտել եմ վաղ պարապ ու սին զվարճանքը.
 Մուգիկային ոտար գիտութունները
 Ատել եմ յես: Համառ ու հպարտորեն
 Մերժել եմ յես ամենն ու նվիրվել
 Միայն մուգիկային: Լոկ առաջին դժվար է
 Քայլը և տարտամ—սոսի առաջին ուղին:
 Հաղթել եմ յես ըսկզբնական տաճանքը:
 Արհեստն եմ հիմք դրել իմ արվեստին —
 Դարձել արհեստավոր. — մատերն իմ վարժ՝
 Հըլու և չոր՝ վազել են անսպաթաք —
 Խոնարհ իմ ականջին: Ձայները մեռցնելով,
 Հերձել եմ յես մուգիկը՝ ինչ գիակ,
 Հարսոնիան ստուգել ալջիբրալով. —
 Այնժամ լուի հանդըգնել՝ փորձված, հմուտ՝
 Ըստեղծարար տենչին նվիրվելու:

Դարձա կերտող, բայց լրեւելան, գաղտնի, —
 Հեռու լեր դեռ ինձնից փառքի մարմաջը:
 Հաճախ այգպես — սընունդ ու նիրհ մի կողմ —
 Որեւր ամբողջ լրեւին խցում փակված,
 Ներշնչումի զգալով արցունք ու խինդը, —
 Այրել եմ իմ վաստակն ու սառն դիտել,
 Ինչպես բարակ ծխում, բռնկվելով,
 Կիզվել են իմ մտքերն ու հնչյունները:
 Ի՞նչ եմ ասում: Այնժամ, յերբ Գլուկը մեծ
 Յեկավ և մեղ հայտնեց նոր գաղտնիքները
 (խորախորհուրդ և դուլթական գաղտնիքը), —
 Ձը լքեցի՞ արգոք մինչ այդ գիտցածս,
 Ամեն սիրածն իմ և անհուն պաշտածը
 Յեւ համարձակ նրա ճամբով չանցա՞
 Յես անտրտունջ, ինչ նա, ով մոլորված եր
 Յեւ ալ մի կողմ դարձավ ոտար կամքով:
 Համառ և աննկուն տոկունությամբ իմ
 Յես վերջապես անեզր իմ արվեստով
 Հասա խորին անթերուխան, և փառքը
 Ահա ժպտաց ինձ. յես արձագանք
 Դրտա մարդկանց սրտում իմ գործերին:
 Յես բախտավոր՝ հրճվում եյի խաղաղ՝
 Աշխատանքով, փառքով և հոչակով իմ,
 Ինչպես և նույն փառքով ընկերներին —
 Ինձ զինակից հմալիչ այդ արվեստում:
 Ո, վո՛չ. յերբեք նախանձ յես չեմ գիտցել,
 Յերբեք. — անգամ Պիչչինին, յերբ դյուլթում եր
 Պարիզեցու ականջը վայրենի,
 անգամ այնժամ, յերբ լլսեցի դեռ նոր

Իֆիգենի ըսկզբնական նվագները,
 Կասի՞ արդ մեկը, թե հպարտ Սալյերին
 Անգոստնիկ նախանձ եր յիրեն,
 Վոտքերի տակ տրորված՝ դեռ վողջ մի ոճ,
 Վոր չա՛ր, անզոր կրծում և հողն ու քարը:
 Վո՛չ վնճ... Իսկ այժմ — ասում եմ ինքուս — այժմ
 Նախանձ եմ չես: Անեզր ու տանջադին
 Յես նախանձում եմ: — Ո՛ր, յերկինք, ել հուր և
 Քո դատն արդար, յերբ շնորհը սրբազան,
 Յերբ մշտնջեն հանճարը հատուցվում և
 Վո՛չ ի պսակ աղերսավառ սիրո
 Յեւ անձնավեր ու ծանր վաստակի,
 Ալ խենթ ու շրջմուխ մեկի գլուխն և
 Լուսավորում պալծառ... Ո՛ր, Մոցարտ. Մոցարտ...

Մոցարտ մտնում և ներս

Ահա, նկատեցիր: Իսկ յես շտապել եմ
 Անակնկալ մի կատակով պատվել քեզ:

Սալյերի

Այստեղ ես: Յեւ — վաղո՞ւց:

Մոցարտ

Հենց նոր: Մի բան կար,

Բերում եյի քեզ մոտ, վոր ցույց տամ,
 Բայց պանդոկի առջև մեկ ել հանկարծ
 Զուլթակը լսեցի: Ո՛ր, վո՛չ, Սալյերի,
 Ավել զավեշտական յերբեք վո՛չինչ
 Լսած չըկաս... Զուլթակա՛սարը կույր
 Այնտեղ voi che sapete*) նվագում եր:

*) Դուք, վոր գիտեք

Մի հրաշք... Չըդիմացա. բերիլ եմ նրան ինձ հետ,
Վոր արվեստով նրա պատվեմ և քեզ:
Մտիք...

Մտնում ե ջութակը մեռիմ մի կույր ծեւումի
Կարող ես, Մոցարտից մի բան...
Մերուկը մի արիա յե մվագում Դոմ-ժուամից. Մոցարտը ծիծաղում ե:

Սալերի

Յեկ ղու խնդալ կարող ես...

Մոցարտ

Ահ, Սալերի,
Բայց միթե չես խնդում և ղու:

Սալերի

Յիրբեք:

Յես չեմ խնդում, լիրբ ներկարարն անպետք
Ռաֆայելի պղծում ե Տիրամայրը.
Յես չեմ խնդում, լիրբ խեղկատակ միմոսը
Անվանարկում ե մեծըն Ալիգյերին:
Կորի, ծերուկ...

Մոցարտ

Սպասիր... Այս ել—ահա,
Գնա, խըմիր կենացն իմ...

Մերուկիմ գնում ե

Դու, Սալերի,
Այսոր մրույլ ես: Յես մի ալլ անգամ
Կըգամ թերևս...

Սալերի

Ինչ ես ինձ բերել:

Մոցարտ

Վոչինչ—դատարկ մի բան: Անցյալ գիշեր
Տանջում եր ինձ անքնությունը,
Յեկ մի լերկու պատկեր եյի հղացել:
Այսոր գրի առա և—իմ փափազն եր
Լսել և քո կարծիքը: Բայց հիմա
Դու գլուխ չունիս ինձ հետ...

Սալերի

Ահ, Մոցարտ, Մոցարտ...

Այդ լիրբ քեզ հետ գըլուխ չեմ ունեցել:
Նստիր: Կսում եմ:

Մոցարտ

Դաշնամուրի մոտ ե

Յերևակալիր,

Ասենք թե—հում... Թեկուղ հենց ինձ... Ջահել,
Սիրահարված — շատ չե ամպետ... Թեթե —
Գեղեցկուհու. կամ ընկերոջ... հենց քեզ հետ...
Ուրախ եմ... և հանկարծ — մահվան տեսիլ մի
Հանկարծական խավար... նման մի բան...
Լսիր ապա:

Նվագում ե

Սալերի

Դու ալդ բերում ես ինձ

Յեկ ինչ — կանգնում ես պանդոկի դռան,
Լսում ես կույր ծերի նվագը. — Տեր իմ,
Դու, Մոցարտ, արժանի չես ինքըդ քեզ:

Մոցարտ

Դեհ, լավ ե, հա...

Սալլերի

Ինչ խորութիւն,
 Խիզախութիւն և ինչ ներդաշնութիւն...
 Աստված ես, Մոցարտ, և գիտակ չես ինքդ, —
 Յես, չես գիտեմ...

Մոցարտ

Ոհո՛ւ Իրաւ. . թերեւ...
 Բայց իմ աստվածութիւնը հույժ քաղցած է:

Սալլերի

Լսի՛ր ինձ, — չեմ ասոր ճաշինք մեկտեղ
 «Վոսի Առյուծը» պանդուկում:

Մոցարտ

Հոժար եմ. —
 Ուրախությամբ: Սակայն, թող տուն գնամ,
 Հայտնեմ կնոջս, վոյ՛ ճաշին այսօր ինձ նա չսպասի:

Գնում է:

Սալլերի

Սպասում եմ: Չուշանաս:
 Ո, վհչ: Ել դիմադրել յես անկարող եմ
 Ճակատագրիս — կոչված եմ յես նրան
 Կասեցնելու — թե վոչ՝ մենք վողջ կորած ենք,
 Մոգիկայի ըսպասավոր քուրմերս,
 Այլ վոչ թե յես միայն իմ խուլ փառքով...
 Ոգուտըն ի՛նչ, վոր Մոցարտը ապրի
 Յեմ նվաճի ելի նոր բարձունքները:
 Կը բարձրացնի դրանով արվեստը. Վհչ. —
 Նրա մահով դալու չե նոր անկումը,

Իրեն ժառանգ նա չի թողնի յերբեք:
 Ոգուտ չըկա: Ինչպես մի քերովմե՛,
 Նա յեղեմյան յերգեր բերեց միջանի,
 Վոր խռովելով հողի զավակներն
 Բաղձանքը թեազուրի՝ թըռչի նորից:
 Թըռի՛ր ապա — և լավ է քանի շուտ է:
 Ո, թե՛ս, Իզորայիս վերջին նվերը, —
 Տասնութ տարի կրում եմ աչն ինձ հետ,
 Յեմ աչն որից հաճախ ինձ կյանքը
 Անտանելի մի խոց է թըվացել:
 Հաճախ գինով անհոգ իմ թշնամու հետ՝
 Գայթակցութեան շշուռը ինձ յերբեք
 Իր կողմը չի թեքել, թեպետ վախկոտ չեմ,
 Թեպետ և խորն ապրում եմ անարգանքը,
 Թեպետ և թանգ չե կյանքը, — վարանել եմ:
 Յերը ինձ տանջել է մեռնելու փափագը. —
 Ինչո՞ւ մեռնել, կարծի եմ — կյանքը դեռ
 Անակնկալ պարգև կըտա և ինձ,
 Ինձ էլ խնդում թերեւ կայցելի
 Յեմ ստեղծարար գիշերն ու ներշնչումը,
 Թերեւ նոր մի Հայդըն կը ստեղծի
 Են հոյակապն, ու յես կը զմալանամ...
 Յեմ խնճուղքում հյուրիս հետ ատիլի —
 Վոսոխ մի էլ դաժան, կարծի եմ, կը գտնեմ
 Յեմ զեռ ավել արող մի անարգանք
 Ժպիւրհ բարձրից ինձ կը շանթի թերեւս, —
 Կոզնեւ ալսեմ, պարգև Իզորայի:
 Իրավ ելի: Յեմ վերջապես գըտա
 Վոսոխն իմ չարագուշտ, և Հայդըն նոր
 Թով բերկրանքով թովեց իմ դառն հոգին:

Ել ժամ ե արդէ — Մի՛րախորհուրդ պարգև՝,
Իջի՛ր այսոր յեղբայրութեան գավաթը...

ՊԱՏԿԵՐ II

Առանձին սենյակ պանդուկում: Դաճնամուր: Մոցարտն ու Սալերին
նստած են սեղանի մոտ:

Սալերի

Այսոր ինչո՞ւ լիս դու մըռայլ:

Մոցարտ

Յես: Վնչ:

Սալերի

Դու, մոցարտ, յերևում ե, վշտացած ես:
Մեր ճաշը լավ, գինին ել՝ պատվական,
Իսկ դու կ' լուռ ես, կ' մըռայլ:

Մոցարտ

Ասեմ քեզ, —
Իմ Requiem-ն *) իմ սիրտը խռովում ե:

Սալերի

Ա՛հ:

Դու գրում ես Requiem: Յեվ ինչ — վաղձոց ե:

Մոցարտ

Վաղուց. յերեք շաբաթ... Տարորինակ
Մի ղեպը... Քեզ չեմ պատմել յես:

*) Կաթոլիկների հոգեհանգստյան արարողությունը:

Սալերի

Վնչ:

Մոցարտ

Այսպես ե:

Յերեք շաբաթ առաջ վերադառնում եմ
Գիշերը տուն: Ասում են — ինչ վոր մեկը
Հարցրել ե ինձ: Ինչո՞ւ, — դա ինձ անհայտ ե:
Մինչև լույս խորհել եմ — ի՞նչ պիտի լիներ
Յեվ ինչ եր կամեցել: Միտս որն ելի
Գալիս ե նա, — կրկին չենք հանդիպում:
Մի որ ել անց, յերբ հատակին նստած՝
Խաղում եյի տղայիս հետ, ինձ կանչում են:
Գնում եմ դուրս — և սեղանի մի մարդ,
Խոնարհ վողջուն տալով, ինձ պատվիրում ե
Մի Requiem գրել, ապա — անհետանում:
Իսկույն գրել եմ սկսում, բայց մարդը
Իմ սեղանի կողքի ե այն որից:
Յես ել ուրախ եմ. ծանրը կը լիներ
Ջրկվել գործիցըս, թեև ավարտված ե
Իմ Requiem-ը: Բայց մի բան կա...

Սալերի

Ի՞նչ:

Մոցարտ

Նոստովանել յես ամաչում եմ...

Սալերի

Ի՞նչ ե:

Մոցարտ

Որ ու գիշեր ինձ չի տալիս հանգիստ
Այդ սեւավոր իմ մարդը: Ինչ մի ստվեր՝
Նա միշտ ինձ հետևում է: Հենց հիմա ել,
Թըվում ե, նա—իբրև լերրորդ մի անձ—
Այստեղ մեզ հետ ե...

Սալյերի

Բնավ ե: Ի՞նչ մանկան վախեր են:
Ցրրիր պարապ խոհերըդ: Բոժարչեն
Ասում եր ինձ հաճախ.— «Լըսիր, Սալյերի,
Յեթե մռայլ մտքեր քեզ պաշարեն,
Բացիր իսկույն մի շիշ փրփրուն շամպայնը
Յեզ կամ նորից կարդա իմ ֆիգարոն»:

Մոցարտ

Իրավ. կարծեմ, մոտիկ եր Բոժարչեն քեզ,
Դու նրա համար Տարարան ես գրել.—
Լավն ե շատ: Այնտեղ մի լիզանակ կա...
Յես միշտ կրկնում եմ, չերբ վոր բախտավոր եմ...
Լա լա լա լա... Ահ, ճիշտ ե այն, Սալյերի,
Թե Բոժարչեն ինչ վոր մեկին թունել ե:

Սալյերի

Յես չեմ կարծում. այդ արհեստի համար
Նա շատ ծիծաղելի չեր...

Մոցարտ

Յեզ հանճար եր,
Ինչ դու և չես: Բայց չե՞ վոր անհարիր են
հանճարը և վոճիրը: Վճի: Այդպես չե:

Սալյերի

Կարծում ես...

Թույն ե լցնում Մոցարտի բաժակը

Դեհ, լըմիր...

Մոցարտ

Կենացը քո,

Ի՞մ բարեկամ... Հանուն անկեղծ սիրո,
Վորով կապված են Մոցարտն ու Սալյերին,
Հարմոնիայի յերկու զավակը...

Ե մ ու մ ե

Սալյերի

Կաց:

Սպասիր, սպասիր... Խմել ես... Առանց ի՞նձ:

Մոցարտ

Անճեռոցիկը մի կողմ նետելով:

Ել բնավ ե: Կուշտ եմ...

Գնում ե դեպի դաշմամուրք:

Դեհ, լսիր, Սալյերի,

Իմ Requiem-ը

Նվագում ե

Դու լավիս ես:

Սալյերի

Այս արցունքը

Յերբեք դեռ չեր հոսել.— և՛ ծանր ե, և՛ հաճո,

Կարծես դաժան մի պարտք եմ կատարել,
 Կարծես բուժիչ դանակը սուր հատել ե
 Անդամը տառապող: Յեղբայր իմ, Մոցարտ,
 Արցունքը այս... Հոսեն թող... Դու շտապիր
 Քո նվագով լցնել նորից հոգին իմ...

Մոցարտ

Ո, թե զգային բոլորն այդպես մեծ ուժը
 Հարմոնիայի: Բայց վնչ,—ինչպե՞ս պիտի
 Ապրեր աշխարհն այնժամ: Վնչ վոք
 Տաղտուկ կյանքի կարիքը չեր հոգա,
 Յեվ կընտրեիր բոլորն ազատ արվեստը:
 Մակավ ենք մենք, ընտրյալ բախտավորները...
 Անդոսնելի ոգուտն արհամարհող
 Անդբաղ քուրմերը մեն գեղեցկության:
 Իրանվ չե: Բայց—տըկար եմ լես այսոր,
 Ինձ ինչ վոր վատ եմ զգում... Գնամ—պառկեմ:
 Մնաս բարով...

ԳՈՍԼԵՆ

Սայքերի

Յտեսություն... մեռալ

Այս,

Դու, Մոցարտ, կը ննջես յերկ՜որ... Բայց միթե
 Իրավ ե նստե՞լ—չե՞մ հանճար: Հանճարն
 Ու սե վոճիրը անհարիր են... Ո, սուտ ե,—
 Իսկ Բոնարդոտին: Միթե հերյուրել ե
 Անմիտ ու բութ ամբոխըն այդ հեքիաթը,
 Յեվ մարդասպան չեր վատիկան կերտողը...

D L U S A U M E S E

Պատկերներ Ձեռնատոմյա տրագիկումեդիայից

1830

1 ՊԱՏԿԵՐ

Ա շ ա տ ք ա կ ու մ: Ա լ ք ե ը ը և ի վ ա ն ը

Ալբեր

Ինչպես ել վոր լինի—պիտի գնամ
Տուրնիրը: Սաղավարտըս տուր, Իվան:

Իվանը բերում է Յրա սաղավարտը

Ծակված է նա, անպետք: Ել անհընար է
Հիմա հագնել: Գտնել է պետք ինձ նորը:
Ո՛ր, ինչ հարված,—անեծք քեզ, Կոմս Դըլորֆ:

Իվան

Դուք ել նըրան տըվիք ինչ վոր վայել եր. —
Ասպանդակից չերը վայր գըլորեցիք,
Ամբողջ մի ուր անշարժ եր—և հագիվ թե
Յեկած լինի ուշքի:

Ալբեր

Բայց նա շահել է.

Վենետիկյան նրա լանջապանը վողջ է,
Իսկ կուրծքը սեփական—կոպեկ ել գին չունի,
Յեվ նորը նա—եկ մեկ է—չի գնի:
Ինչո՞ւ գետնով չըտվի նրա սաղավարտը:
Յեվ կը գլորվեր, չեթե չը քաշվելի
Դքսից ու տիկնանցից: Անեծք քեզ, Կոմս:

Ո՛ր, լավ եր տա՛ն անգամ փշրե՛ր իմ գանգը:
 Յե՛կ նոր ըզգեստ ե պետք: Վերջին անգամ
 Նստած եյին այնտեղ մեր ասպետները՝
 Մետաքս, թավիշ հազած: Լոկ յեա եյի
 Զրահով նստել զրքսի սեղանը:
 Ասի, վոր պատահմամբ տուրնի՛ր ընկա՛ լես:
 Իսկ լո՛ւնչ ասեմ հի՛մա: Ո, խեղճությո՛ւն իմ:
 Վորքան ես դու մեր սիրտը նվաստացնում:
 Յերբ վոր Դըլորժն իր ծանըր նիզակով
 Ծակեց իմ սաղավարտն ու—սլացավ,
 Իսկ յես՝ գըլուխըս բաց՝ խթանեցի
 Նմիրըն իմ, հողմի պես սուրացի
 Յե՛կ քսան քայլի վըրա կոմսին թռցրի,
 Ինչպես մանկան, յերբ տիկինները վողջ
 Վոտքի լե՛ւան, յերբ ինքն անգամ՝ Կոտիլդը—
 Յերեսը ծածկելով— ճըշաց հանկարծ,
 Յե՛կ զարկն իմ գովեցին մուսետիկները,—
 Ա՛յն ժամ վո՛չ վոք չըզգաց ճշգրիտ պատճառը
 Թե՛ իմ խիզախության և թե՛—ուժի.
 Յես խենթացա ֆեսոված սաղավարտից:
 Հերոսության պատճառը լո՛ւնչն եր,—ժլատությո՛ւնը,—
 Ա՛յն, դրանով դըժվար չե վարակվել
 Այստեղ, իմ հորըս հետ, մի կըտուրի տակ:
 Ինչպե՛ս ե խեղճ Նմիրը:

Իվան

Դեռ կաղում ե:

Յե՛կ դեռ հեծնել նըրան դուք չեք կարող:

Ալբեր

Դեհ, ինչ արած.— շառատը կը գընեմ,
 Յե՛կ թանգ ել չեն ասում, կարծեմ, նրա գինը:

Իվան

Նժան ե, բայց մենք փող չունինք իսպառ:

Ալբեր

Իսկ լո՛ւնչ ասաց անպետքն այն, Սոլոմոնը:

Իվան

Ասում ե, թե՛ առանց գրավի ալիս
 Նա չի կարող գումար տալ ձեզ պարտքով:

Ալբեր

Ա՛հ, գրավական: Բայց ո՛ր ե գրավը, խենթ:

Իվան

Յես ասացի:

Ալբեր

Յե՛կ—լո՛ւնչ:

Իվան

Տնքում, կծկվում ե:

Ալբեր

Դեհ, ասելիք նըրան, վոր հայրըս ինքն ել
 Հարուստ ե, ինչ ջհուդ, վոր վաղ թե ուշ՝
 Փառանգելու յեմ վողջ:

Իվան

Յես ասացի:

Ալբեր

Յեւ—լինչ:

Իվան

Կծկվում, տնքում ե:

Ալբեր

լինչ տանջանք ե:

Իվան

Ուզում եր գալ ախտեղ:

Ալբեր

Դեհ, փառք աստծո,—

Առանց փրկանք լես չեմ թողնի գնա:

Դուք ծեծում եմ

Այդ հիվ ե:

Մտնում ե ջիւղը

Ջիւղ

Խոնարհ ծառադ եմ:

Ալբեր

Ա՛հ. չեկե՛լ ես,

Նզովյալ ջհուդ, մեծարդըդ Սուլումոն,

Ապա, չեկ մոտ, ախտեղ,— դու պարտք, լըսել եմ.

եւ չեմ տալիս:

Ջիւղ

Ասպետ իմ վողորմած,

Պատիվ ե քաղցըր... բայց՝ եւ փող չըկա:

Վորտե՞ղ գտնեմ: Քանդվել եմ, սնանկացել՝
 Փող լըցնելով ասպետներինդ գրպանը,
 Իսկ հատուցել—չըկա: Խնդրում եմ ձեզ,
 Վոր տաք ինձ գեթ մի մասը:

Ալբեր

Ավաղակ:

Կարծում ես, փող լինե՞ր ինձ մոտ, յես—լինչ ե,—
 Քեզ հետ գլո՞ւխ կը դընե՞յի: Դե, բավ ե,
 Մի համառիր, ազնիվ իմ Սուլումոն,
 Հանիր քըսակդ և հարյուր վոսկի տուր,
 Քանի գրպանըդ չեմ զննել:

Ջիւղ

Հարց՞ւր:

Յեթե հարյուր վոսկի ունենայլե՛...

Ալբեր

Լըսիր ինձ,—

Ամսթ չե, միթե, վոր բարեկամիդ
 Մերժում ես:

Ջիւղ

Յերգվում եմ:

Ալբեր

Բավ ե, բավ ե:

Դու գրավ ես պահանջում: Ճնշե՛լ ես, ինչ ե:
 Քեզ լինչ կը տամ յես գրավ: Պողի կաշի:
 Յեթե գրավի մնացած լինե՞ր մի բան,—

Վաղուց ելի ձախել: Թե՛ խոսքըն ասպետի
Քեզ բավական չե, շահն:

Ձիուդ

Ո՛ր, խոսքը ձեր,—

Քանի դեռ վողջ եք,— շատ և շատ արժի,
Ֆլամանդական բոլոր հարուստ գանձերը՝
Ինչ թալիսման՝ կարող ե ձեզ բանալ:
Սակայն, յեթե հանձնեք հըզոր ալդ խոսքը
Ինձ— հրեայիս աղքատ, իսկ դուք ապա
Մեռնեք (աստված մի արեսցե), այն ժամ
Ձեռքին իմ խոսքը ձեր կը նըմանվի
Ծովում թաղված արկղի բանալի:

Ալբեր

Արդ՞ի՞ք ինձնից ավել կապրի իմ հայրը:

Ձիւդ

Չգիտեմ: Մեր կյանքը մենի՛ չենք սահմանողը,
Յերեկ ծաղիկ եր պատանին իսկ այժմ
Ել չըկա: Յեվ չորս ծերուկ ան—
Իրենց ի կոր ուսերն առած դազողը՝
Տանում են պաղ շիրիմ: Բարոնն առողջ ե,
Կամք աստված—դեռ տասը, քսան տարի ել
Յեվ քսանհինգ և յերեսուն կապրի:

Ալբեր

Հրեա, սըտնում ես: Յերեսուն տարուց լես
Կդառնամ արդեն հիսուն: Այն ժամ ալդ փողը
Ինձ ել ինչի՞ս ե պետք:

Ձիուդ

Փոփոք:— Փողը

Մեզ պետք ե միշտ, բոլոր հասակներում:—
Ճարպիկ ծառա չե նա, յերբ պատանին ե տերը
Յեվ անխընա ճամբում ե աստ ու անդ,
Մինչ՝ ծերունու անդամաձան ընկերն ե,
Յեվ նա պահում ե փողն, ինչ լույսն աչքի:

Ալբեր

Իմ հոր համար ալդ փողը վո՛չ ծառա չե
Յեվ վո՛չ ընկեր, ալլ—տեր: Ծառա չե ինքը
Յեվ—ինչ ծառա:—Ինչ ալժիրյան ըստրուկ,
Կամ՝ շղն կապած: Խոնավ ու ցուրտ վորջում իր
Ապրում ե, ջուր խմում, կըծում չոր հացը,
Գիշերն արթուն՝ վազում ե, հար հաջում:
Մինչդեռ վոսկին ննջում ե անխըռով
Սընտուկներում:—Լըռի, կը գա մի որ՝
Յեվ—ինձ կը ծառայի՝ թողած իր նիրհը:

Ձիուդ

Այն: Ծեր բարոնի թաղմանն արցունքը
Պակաս ե տեղալու, քան փողը: Թո՛ղ
Աստված ձեզ շուտ կարգի ժառանգ:

Ալբեր

Amen!

Ձիուդ

Բայց, կարելի չե...

Ալբեր

Ի՞նչ:

Ջիուլի

Այնպես, թվում եր,

— Միջոց կա մի...

Ալբեր

Միջոց, ասում ես:

Ջիուլի

Հա:—

Ծանոթ ծերուկ ունիմ այստեղ, հրեա,
Աղքատ մի դեղագործ ե...

Ալբեր

Վաշխառու—

Այնպես, ինչպես և դու, թե՛ քիչ աղնիվ ե:

Ջիուլի

Ո, վոչ, ասպետ: Այլ առևտուր ունի այդ Տովիշն,—
Նա պատրաստում ե կաթիլներ... Հրաշք—
Ինչպես են ներգործում:

Ալբեր

Բայց ի՞նչ ոգուտ ինձ:

Ջիուլի

Մի գավ ջրին լերեք կաթիլը բավ ե,
Չունի վոչ համ և վոչ ել գույն հեղուկը,
Իսկ մարդն՝ առանց աղիքների ցավի,
Սիրախառնուքի և տանջվելու—մեռնում ե...

Ալբեր

Ծերուկը թույն ե վաճառում:

Ջիուլի

Այո—

Յեվ թույն:

Ալբեր

Իսկ փոխարեն փողի՝ դու, ի՞նչ ե,—
Մի գույք հարյուր սրվակ ինձ թույն կը տաս,
Սրվակը—մի վոսկիլ: Սոսիլ, այդպե՞ս ե:

Ջիուլի

Հաճո լե ձեզ, ազնիվ ասպետ, ծաղրել ինձ,—
Վոչ, լես, այնպես... Կարծում եյի, թերեւ,
Վոր բարոնին արդ ժամ ե հանդիպու...

Ալբեր

Ինչպե՞ս թե.—հմյր սպանել: Յեվ հանդիպում ես
Վորդուն այդ խոսքը—դու, Իվան, բռնիր...
Բայց դու գիտե՞ս, ջըհուդ վողորմելի,
Դու շուն և ոձ, վոր քեզ խակոյն
Կախել կը տամ դռանը:

Ջիուլի

Մեղք արի:

Ներեք ինձ: Դա—կատակ եր:

Ալբեր

Թողը բեր, Իվան:

Զիւղ

Կատակ եր... Տեր իմ... Փող եմ ձեզ բերել...

Ալբեր

Դուրս, շոուն:

Հրեան գնում է

Ահա մինչ ուր ե հասցընում ինձ

Ժըլատուլթուեն իմ հոր: Համարձակվեց
 Զըհուդն ինձ ինչ առաջարկել: Իվան, գինի,—
 Դողում եմ վողջ մարմնով... Սակայն, Իվան,
 Ինձ փող ե հարկավոր: Հասիր այդ անխնայ
 Զուգին և առ նրա փողերը: Յեվ բեր,
 Թանաք այստեղ: Յես ստացական կը տամ
 Այդ սրիկային: Բայց վոտը այստեղ չըգնի
 Ըստոր Հուդան: Կամ—վնչ, քեզ հետ եմ, կայց,—
 Նըրա վոսկին թույնով ե շաղախված,
 Ինչ յերեսուն արծաթն իր նախահոր...
 Գինի, ասի քեզ, բեր:

Իվան

Կաթիլ անգամ

Գինի չըկա:

Ալբեր

Իսկ ասն, վոր Սպանիայից
 Նըվեր եր ուղարկել Ռեմոնը,—հըր է:

Իվան

Յերեկ վերջին մի շիշն եր, վոր տարա
 Հիվանդ մեր պալատարին:

Ալբեր

Այո, հիշում եմ...

Դե, ջուր բեր ինձ... Ո, անխնայ այս կյանքը...
 Բայց—վերջ, Կորի թող դուքսն այսոր մեր դատը:
 Թող հորըս հարկադրի, վոր ինձ պահի
 Վորդուն վայել որում, այլ վոչ թե, ինչ մի մուկ՝
 Ընդհատակյա ծնունդ...

II Պ Ա Ս Կ Ե Ր

Նկուզ

Ռարան

Ինչպես ջահել շվախըն ըսպասում է
 Չարաճճի մի ինչ վոր պլուռուհու,
 Կամ թե խաբված մի հիմարի,—յես ել
 Սպասել եմ որն ամբողջ, վոր դամ՝ իջնեմ
 Անգամ սնտուկներին գաղտնի նըկուղը:
 Ո՛, քաղցը ժամ: Այսոր կարող եմ յես
 Մնտուկն իմ վեցերորդ (և դեռ կիսատ սնտուկը)
 Մի բուռն կուտած վոսկի նորից լցնել
 Շատ չե կարծես, բայց—որն որին գանձերն իմ
 Աճում են: Կարգացել եմ տեղ մի, թե իբրե
 Հրաման ե տվել աբքան գինվորներին,
 Վոր հող բերեն—ամենքը մեն մի բուռ,—
 Հըպարտ կանգնել ե բլուրը—և արքան
 Խնդումնալից դիտել ե բարձունքից
 Յեվ դաշտը՝ լի սպիտակ վըրաններով
 Յեվ ծովըն, ուր վազել են իր նավերը:
 Յես ել այդպես՝ մեկ—մեկ աղքատ մի բուռ
 Սովորական իմ տուրքը բերելով,

Կանգնել եմ իմ բըլուրը և բարձրից
 Հայել կարող եմ—ինչ վոր ինձ հըլու յե,
 Ինձ ինչն ե վոն հըլու: Ինչպես մի դե—
 Կարող եմ ալստեղից վարել աշխարհը:
 Թե կամենամ—կը բարձրանա գըլակըս,
 Յեվ վեհաշուք իմ պուրակներն, ահա,
 Խնդուն խմբով կիջնեն չքնաղ կույսերը,
 Յեվ տուրքն իրենց կը տան ինձ մուսաները,
 Յեվ անկաշկանդ հանճարն ինձ կը գերվի,
 Յեվ ջինջ հողին ու աշխատանքն անդուլ
 Խոնարհությամբ իմ վարձքը կակնածեն:
 Յես կը սուլեմ—և՛ յերկուղած, խոնարհ՝
 Կսողա ինձ մոտ արյունշաղախ վոճիրը,
 Յեվ աջն իմ կը լիզե, կնայե աչքերն իմ,
 Կամքիս նշանն աշխտեղ վորոնեղով:
 Հըլու յե ինձ ամենն, իսկ յես— ազատ,
 Յես—վեր բուրբ բաղձանքներից—հանդիստ եմ,
 Գիտեմ իմ ուժը յես, և արդ՝ ինձ բավ ե
 Գիտակցությունն ալս:

Նայում ե իբ վոսկիներին

Շատ չե ալս թերևս,

Բայց մարդկային քանի՛, քանի՛ հոգսի,
 Լացի, սըտի, աղերս ու անեծքի
 Ծանրակըշիւ սա փոխանորդն ե այժմ:
 Այստեղ դուրսն կա հին... ահա: Այսոր հեռց
 Այլին ե ինձ բերել, սակայն դեռ սկիզբը
 Նա ծնկաչոք ու վողբալով կանգնել եր
 Զավակներով դըռանն իմ վողջ կեսոր:
 Անձրե յեկավ, կտրեց, նորից յեկավ,—

Բայց կեղծավորն անշարժ եր: Յես նըրան
 Կարող եյի քըշել, բայց շըշնում եր
 Ինձ ինչ վոր ձայն, վոր պարտքն իր ամուսնու
 Կըտա և—վաղը բանտ գընալ հոժար չե,
 Իսկ ալս: Այս ել բերել ե ինձ Տիբոն—
 Յեվ վճարեղից ալս ծուլ սրիկան կարող եր
 Դուրսն գտնել... Ինչպե՛ս, գողացել ե,
 Կամ մեծ ճամբին, աշխտեղ, գիշերը մուլթ...
 Այո: Յեթե ալս գանձերի համար
 Թափած քրտինքն, արցունքը և արյունը
 Հանկարծ մի պահ հորդեր յերկրի խորքից,—
 Նորից հեղեղ կը դար և կը խեղդեր ինձ
 Անդավաճան իմ նըկուղում: Բայց—ժամ ե:

Ուզում ե րամալ սնտուկը

Ամեն անգամ, յերբ կամենում եմ յես
 Մտուկ բանալ—բռնում են տապն ու դոդն ինձ:
 Յերկուղ չե (վոն,— յես ահ չունիմ իսպառ,
 Ահա իմ սուրն ինձ հետ—վոսկու պաշտպանն ե
 Պողպատն աղնիվ),—բայց սիրտս միշտ ճնշում ե
 Անմեկնելի մի ինչ վոր ըզգացում...
 Չե՛ կան մարդիկ,—ասում են բժիշկները,—
 Վոր սպանությամբ հաճույք են ըստանում:
 Յեվ յերբ դընում եմ բանալին կողպեքը,—
 Ըզգում եմ ինչ նրանք աշխտամ, յերբ վոր
 Դանակ են խրում զոնի մարմինը.— քաղցր ե
 Յեվ ահավոր մեկ տեղ...

Բայց ե ամուլ սնտուկը

Ահա և իմ բերկրանքը:

Լցում ե փոքր

Գնացե՛ք,—եւ բնով եւ ձեզ չափել աշխարհը՝
 Հըրու մարդկանց կրքին ու հոգսերին:
 Ննջե՛ք ուժի եւ անդորրի քընով—
 Ինչպէս անհուն յերկնում ննջում են դիք:
 Խնձուք սարքել այսոր յես կամենում եմ,—
 Մոմեր վառեմ անտուկներէս առջի,
 Բանամ բոլորն ու ինքըս մեն մենակ
 Դիտեմ շողշող վոսկու իմ ծով լեռները:

Վառում ե մոմերն ու մեկ մյուսի հետեւից բաց ե ամում քոյոր
 անտուկները

Իշխում եմ յես:—Ի՛նչ փայլ կախարդական:
 Հըրու յի ինձ, հըզոր ե տերությունն իմ,—
 Այստեղ ե բախտըս, իմ պատիֆն ու փառքը:
 Իշխում եմ յես, — բաց ճով ե տիրելու
 Գանձերն այս, յերբ մեռնեմ: Փառանգըս իմ:
 Այն խելազուրկ վատնիչը պատանի
 Յեւ ցոփասեր շրվայտների ընկերը:
 Դեռ շունչըս չը մարած կիջնի այստեղ նա,—
 Այս անխըռով ու հարամունջ նկուղը՝
 Ագահ ու շողոքորթ պալատական խմբով:
 Յեւ կորզելով դիակիցն իմ բանալին,
 Նա քրքիջով կբանա իմ անտուկները,
 Յեւ կը հոսեն գանձերն իմ անհամար
 Բյուր գրպաններ՝ մեծաքսակար ու ծակ...
 Նա կը փըշըի այս սրբազան գավերը
 Նա ցեխըն սուրբ յուզով կը հագեցնի,
 Նա կը շալլի... Բայց ի՛նչ իրավունքով,—
 Յես միթե ձրի յեմ ձեռք բերել ամենը,
 Կամ՝ դուրսությամբ, ինչ խաղարկու մի, վորը

Քարեր նետում—դիզում ե վոսկիներ:
 Դիտակ են, թե վորքան դաժան զրկանք եր դառն, —
 Ջսպանակած կրքեր ու սև խոհեր,
 Որվա հոգսեր ե գիշերներ անքուն,
 Վոր յես ապրել եմ... Թե՛ կասի վորդիս,
 Վոր սիրտըն իմ պատել ե հին մամուռը,
 Վոր յես կրքերս ալրել եմ, վոր հոգիս
 Յերբեք դեռ խիղճն եւ չի՛ կըծել—ո, խիղճը,
 Ճիրանավոր ու սիրտ ճանկաող գազանը,—խիղճը,
 Այդ հյուրն անկոչ, տաղտուկ այդ զրուցակիցը,
 Կոպիտ պահանջատերը, այդ վըհուկը,
 Վորից լուսինն ե խավարում, շիրիֆն ե
 Խոռվահուլից իր արձակում մեռելը:—
 Ո, վոչ, — ցավով դեռ վաստակիր քո գանձը,—
 Ապա կտեսնենք—կը հաճենա դժբախտը
 Արցան գընով կուտածը շալլել:
 Ո՛ր, հնար լիներ, վոր անարժան աչքից
 Նըկուղն իմ պահեյի, թե կարեյի
 Շիրմիցըս դալ այստեղ—պահակ ըստվեր մի—
 Նստել սընտուկներէս ե վողջերից
 Գանձերըս իմ հսկել, ինչպէս վոր այժմ:

III ՊԱՏԿԱՐ

Պալատում: Ալբեր ե Դուքս

Ալբեր

Հավատացե՛ք ինձ, տեր, յերկա՛ր ապրել եմ
 Ամոթը սև բախտի: Դուք իմ տրտունջը
 Չեյիք լրսի, թե չը խելզեր ինձ նեղը:

Դուրս

Գիտեմ, գիտեմ յես, իմ ազնիվ ասպետը,
 Վորդին՝ ինչ դուք եք, հորն իր անտեղի
 Ձի մեղադրի։ Այդչափ ստորները քիչ են...
 Հանգիստ չեղեք.— ձեր հորը յես վստահ
 կը համոզեմ մենակ և անաղմուկ։
 Սպասում եմ նրան։ Ձենք հանդիպել վաղուց ե։
 Նա բարեկամ եր իմ պապիս, Հիշում եմ,
 Յերբ յես մանուկ եյի դեռ ևս, նա
 ինձ բազմեցնում եր իր ձիու թամբին,
 Ապա ծածկում սաղավարտով իր ծանր,
 ինչպես հսկա դահգով։—

Բայց հիվ ե այս։

Նա չէ։

Նայում ե լուսամուտից դուրս

Ալբեր

Այո, դա նա չե, տեր իմ։

Դուրս

Անցեք

Սենյակըն ախ։ Ձեզ կը կանչեմ։

Ալբերը գնում ե։ Ներս ե մտնում քարանթ

Դուրս

Ուրախ եմ, վոր տեսնում եմ ձեզ առույգ։

Բարոն

Յես բախտավոր եմ, տեր, վոր ձեր կանչով
 Ներկայանալ այսոր յես ձեզ կարող եմ։

Դուրս

Վաղուց, բարոն, վաղուց ենք անջատվել։
 Հիշում եք ինձ արդյոք։

Բարոն

Ո, տեր իմ, չէս։

Տեսնում եմ— ինչ այսոր։ Մանուկ եյիք
 Կայտառ։ Ձեր հայրը— հանգուցյալ իմ դուքսը—
 Ասում եր ինձ. Ֆիլիպ (նա միշտ այդպես
 Ֆիլիպ եր ինձ կոչում),— դեհ, ի՞նչ կասես,—
 Մի՛քսան տարուց, իրավ, թե՛ դու, թե՛ յես,—
 Հիմար կլինենք մենք այս փոքրի առջև,
 Այսինքն— ձեր։

Դուրս

Իսկ այժմ կապը հին

կը նորոգենք։ Պալատն իմ մոռացել եք։

Բարոն

Յես ծեր եմ այժմ, տեր, և պալատում
 Յես ի՞նչ անեմ։ Ջահել եք, Ձեզ հաճո չեն
 Հանդես ու տուրներներ, Իսկ յես արդեն
 Անպետք եմ դրանց համար։ Տացե աստված մի ուղմ—
 Պատրաստ եմ՝ տնքալով՝ նըժուլգն իմ
 Հիծենել նորից.— դեռ ուժ կլինի մերկացնելու
 Դողդոջ ձեռքով հին սուրբ և ձեզ համար։

Դուրս

Բարոն, լեռանդը ձեզ մեզ քաջ ծանոթ ե,—
 Դուք բարեկամ եյիք պապիս, իմ հայրը

Հարգում եր ձեզ: Յես ել հաշվում եմ ձեզ
Հաստատ ու քաջ ասպետ,— սակայն՝ նստե՛նք:
Դուք զավակներ ունի՞ք, բարոն:

Բարոն

Մեկ վորդի:

Դուստ

Ինչո՞ւ, ապա, լմ շրջանում չե նստ:
Տաղտուկ ե ձեզ պալատը, նրան սակայն—
Կոչմամբ ու տարիքով—պատշաճ ե այս շրջանը:

Բարոն

Վորդուս իմ խորթ ե ճոխ կյանքի ժխորը,
Նըրա հոգին մըռալլ ու արտառոց ե—
Դըղյակի շուրջ, անտառներում շրջում ե,
Ինչ յեղջերու ջահել:

Դուստ

Վաչել չե ալդ
Նրան: Մենք շատ շուտով կանհնք այնպես, վոր նա
Ընտելանա հանդես ու խնճուղքի:
Ուղարկեցե՛ք, թող գա: Յեվ հատկացրեք
Գումար մի, վոր կոչմանը իր պատշաճ ե...
Մռալլվում եք դուք: Ճամբից, բարոն, հոգնե՛լ եք
թերևս...

Բարոն

Ձեմ հոգնե՛լ չես, տեր,բայց ձեր
Խոսքերն ինձ շրփոթում են: Ձեր առջև
Խոստովանել դժվար եր ինձ համար,

Բայց դուք վորդուս մասին ինձ հարկադրում եք
Ասել ձեզ այն, ինչ յես չեցի կամիլ:
Ո, տեր իմ, նա—դժբախտաբար—արժան չե
Վնչ ձեր շընորհներին և վնչ պատվին:
Վատնում ե նա ցասկոտությամբ տարիքն իր
Յեվ—ստոր արատներով...

Դուստ

Նրանից ե ալդ, բարոն,

Վոր նա մենակ ե: Զի մենակութունը
Յեվ սին պարապը—մահ են պատանուն,
Ասեք՝ թող գա մեզ մոտ: ախտեղ կանցնին
Մըթուտներում ծընունդ առած սովորքը:

Բարոն

Ինձ ներեցեք, իմ տեր, սակայն—իրավ,
Համաձայնե՛լ դրան չես անկարող եմ:

Դուստ

Սակայն—ինչո՞ւ:

Բարոն

Մի հարկադրեք ինձ, տեր...

Դուստ

Յես պահանջում եմ: Հայտնեցեք պատճառը
Ձեր հրաժարման:

Բարոն

Յես զայրացած եմ, տեր,

Վորդուս վրա:

Դուք

Ինչո՞ւ:

Բարոն

Մի չար վոճիկ համար:

Դուք

Բայց ի՞նչ վոճիկ ե—պարզ ինձ ասացեք:

Բարոն

Ազատեցեք ինձ, Դուքս:

Դուք

Տարորինակ ե շատ:

Թե՛ ամաչում եք դուք նրա համար:

Բարոն

Այո...

Դուք

Բայց—ի՞նչ ե նա արել:

Բարոն

Նա... Նա ուզում հր...

Հսպանել ինձ, տեր...

Դուք

Սպանել: Արդ ինչ դատի

կը տամ նրան, ինչ սև վոճրապորժի:

Բարոն

Ապացուցելը—զուր ե, բայց գիտեմ,
վոր հիրավի ծարավ ե իմ մահվան,Թեև գիտեմ ինչն էլ, վոր փորձել ե
Նա ինձ...

Դուք

Ի՞նչ:

Բարոն

Կողոպտել...

Այբերը վազում ե ներս

Այբեր

Բարոն, սըտնում եք...

Դուք (Այբերին)

Դուք հանդըգնում եք...

Բար

Դ՞ճ, այստեղ... Ինչպես ես

Համարձակվում ասել այդ խոսքը հորդդ...

Սըտնում եմ... Յե՛ս... Յե՛վ այն ել—մեր տիրոջ...

Թե՛ ինչ .. Ասպետ չեմ ինչ ասվես...

Այբեր

Ստախոս եք:

Բարոն

Յե՛վ դեռ վորոտը չի՞ պայթել, Ո՛ր, տեր իմ—

Դեհ, ընդունիր... Թող սուրբ մեղ դատի:

Նկատում եմ ձեռնոցը: Վարդիմ արագորեն վերցնում եմ այն:

Ալբեր

Ո, շնորհակալ եմ: Սա—միակ նըվերն ե հորըս:

Դուստ

Այս ի՞նչ եր, տեր, Այս ի՞նչ եր—կատարվեց:

Վորդին առավ մարտահրավերն իր հոր:

Այս ի՞նչ որեր եմ չես կախել կրծքիս

Դքսից շղթան: Լըռեք արդ,—դհւ, անմիտըդ,

Յեւ դհւ, վազրուկ... Ել բավ հ:

Վորդուն

Թող այդ ալժմ:

Տվեք ինձ այդ ձեռնոցն իսկուհին:

Խլում եմ քա ձեռքից

Ալբեր (մի կողմ)

Ավստ:

Դուստ

Յեւ ինչպես եր դ 'եւ ձանկերն—հրեշը...

Դնացեք և ել—այս իմ չերկաք,

Մինչև այն որն, որ ինքըս ձեզ այստեղ

Կանչել կը տամ:

Ալբերը գնում ե

Վորդունի ծերոհկ,

Դեթ ամաչում եք:

Թառն

Ներեցեք ինձ, տեր...

Հնկնում եմ... Ա՛հ... Դողում եմ իմ ծնկները...

Խեղդվում եմ... Ո՛հ... Բանալիներըս ճւր եմ...

Ո՛ւր եմ... Իմ բանալիներըս...

Դուստ

Տեր իմ... Նա մեռավ...

Ո, ժամանակ դաժան, դաժան սրտեր:

ԲԱՐԵՆՅՈՒՐ

1830

Leporello: O statua gentilissima
Del gran Comandatore!
... Ah, Padrone!¹⁾
Don Giovann

I ՊԱՏԿԵՐ

Ֆիլիբերտ Գերեզմանոց Մադրիդի մոտ: Դոն Գուան և Լեպորելլո

Դոն Գուան

Սպասենք այստեղ մինչ մութը: Վերջապես
Հասանք դռները Մադրիդի: Մի պահ ել —
Յեղ կը սուրամ ծանոթ փողոցներով՝
Բեխիա թիկնոց քաշած, հոնքիս — Գլխարկը:
Կարծում ես դու, վոր ինձ կը ճանաչեն:

Լեպորելլո

Ո՛ր, Դոն Գուանին դժվար է ճանաչել:
Նրա նմաններն անթիվ են:

Դոն Գուան

Կատակում ես:

Բայց ով կճանաչի ինձ:

Լեպորելլո

Թեկուզ պահակը,

Գլխանոն, կամ հենց նվազածուն հարբած.
Կամ նույնպիսի հանդուգըն կավալերը —
Անութի առած իր սուրն ու թիկնոցով:

¹⁾ Լեպորելլո. Ո՛վ մեծը կոմանդորի պատվարժան արձանգ:
Ահ, պարոն...

Գոն Գուռն

Ի՞նչ փուլթ — թեկուզ և ճանաչեն: Միայն թե
Ձը հանդիպեր ինձ ինքն արքան: Բայց փուլթ չե, —
Յես Մադրիդում յերկուղ չունիմ բնավ:

Լեպորելլո

Իսկ վաղն ևեթ կհայտնեն թագավորին,
Վոր աքսորից Դոն Գուռնը ինքնակամ
Վերադարձել ե: Իսկ դուք գիտե՞ք, թե ձեզ
Այնժամ նա ինչ կանի:

Գոն Գուռն

Հետ կուղարկի:

Յերբեք, իհարկե, չեն կըտրի գլուխըս:
Յես չե՞ վոր պետական մի վոճրագործ չեմ:
Նա ինձ աքսոր քչեց՝ հենց սիրելով ինձ,
Վոր սպանվածի մոտիկ հարազատները
Հանգիստն իմ չըխռովեն...

Լեպորելլո

Ուրեմըն, դուք

Հանգիստ պիտի ախտեղ ել նստելիք:

Գոն Գուռն

Խոնարհ ծառադ եմ: Հաղիվ ախտեղ
Ձանձրուլթն ինձ չըսպանեց: Այդ ի՞նչ մարդիկ են
Յեվ ի՞նչ յերկիր ե: Իսկ յերկինքը... — ծուխ:
Ապա՝ կանանք: Յես չեմ փոխի յերբեք,
Գիտե՞ս արդյոք, հիմար իմ Լեպորելլո,
Անդալուզյան վերջին իսկ գեղջկուհին ել՝

Անգամ նրանց, յեթե են լավն ել տան, յերդվում եմ:
Սկզբից նրանք ինձ դուր ելին գալիս —
Յեվ աչքերով կապույտ, սպիտակ մորթով,
Համեստությամբ, և՛ առավել — վոր նոր եր...
Բայց փառք ասածո, շոտով կըռահեցի,
Տեսա, վոր գլուխ դնելն անգամ իսկ մեղք ե, —
Նրանք կյանք չունին, մոմե տիկնիկ են վողջն ել,
Ապա մերճեք... Սակայն, լսի՛ր, այս տեղը
Ծանոթ ե մեզ — ճանաչեցի՛ր արդյոք:

Լեպորելլո

Ինչպես չե: Սուրբ Անտոնիոսի այս վանքը
Հիշում եմ յես: Գալիս ելիք այստեղ,
Յես պուրակում պահում ելի ձիերը, —
Խոստովանում եմ — անիծյալ պաշտոն եր:
Հավատացեք, վոր ձեր ժամանցն ուրախ եր
Ավել, քան իմը:

Գոն Գուռն (մտախոհ)

Ո՛ր, ինեզ դժբախտ իմ:

Ել նա չըկա: Ինչպես ելի սիրում:

Լեպորելլո

Ինեզը — սեռչյան... Ո՛ր, յես հիշում եմ,
Յերեք ամիս սիրաբանում ելիք, —
Հազիվ միայն ոգնեց ձեզ սատանան:

Գոն Գուռն

Գիշերը... հուլիսին: Տարորինակ
Հաճույք եր ինձ նըրա տխուր հայացքը,
Շուրթերը դիակնային: Տարորինակ ե:

Հիշում եմ — դու նրան սիրուն չեիք
 Դտնում: Իրավ, նրան կոչել դժվար եր
 Անխոցելի չքնադ... դուցե աչքերը,
 Միայն աչքերը: Յեւ հայացքը... եւ լերերը
 Նման հայացք յես չեմ տեսել: Իսկ ձայնը
 Նվաղ եր, թուլ, ինչ ձայնը հիվանդի:
 Իսկ ամուսինը — մի դաժան սրիկա լեր,
 Շատ ուշ յես իմացա... Ո՛ր, խեղճ Ինեզ իմ...

Լեպտոբլո

Ի՞նչ փութ... հետո յեղան այլերը:

Դոն Գուան

Ճիշտ ե,

Լեպտոբլո

Իսկ վողջ մընանք՝ կլինին ելի նորերը:

Դոն Գուան

Իրավ:

Լեպտոբլո

Վորին մենք այժմ Մադրիդում
 Պիտի ջանանք գտնել:

Դոն Գուան

Շտապում եմ նրան տեսնել իսկույն:

Լեպտոբլո

Վատ չե:

Դոն Գուան

Ուղիղ նրա մոտ դռնից, իսկ թե վոր հյուր
 Լինի արդեն — պատուհանից, խնդում եմ:

Լեպտոբլո

Իհարկե: Դեհ, ահա և մենք ուրախ ենք:
 Յերկար չեն մեզ խռովում ննջեցյալները:
 Գալիս ե մեկն այստեղ:

Մտնում ե վանակամբ

Վանակամ

Կրգա հիմա

Յեւ նա: Դուք հիվ եք: Դոնա Աննայի
 Սպասավորները չեք արդյոք այստեղ:

Լեպտոբլո

Վոչ, մենք ինքներս եւ պարոններ ենք, հայր,
 Յեւ ըզրոսնում ենք:

Դոն Գուան

Իսկ հիմ եք դուք սպասում:

Վանակամ

Պիտի շուտով այցի գա Դոնա Աննան
 Իր ամուսնու շիրմին:

Դոն Գուան

Ո՛ր, Դոնա Աննա

Դը-Սոլվան: Այն կոմանդորի այլին,
 Վորին սպանել եր... չեմ հիշում թե՛ ով:

Դրամատիկ. իատվածներ—Ց

Վաճակաճ

Այն անառակ, անխիղճ, անսուրբ Դոն Դուանը:

Լեպոռելլո

Ոհո: Ահա թե ինչ: Նըրա հաժապն արդեն
Խաղաղ վանքերն ե մուտք գործել անգամ,
Յեվ գովք են նրան յերգում ճգնավորները:

Վաճակաճ

Ծանոթ ե ձեզ թերևս:

Լեպոռելլո

Յեզ: Բնավ:

Իսկ հւր ե այժմ նա:

Վաճակաճ

Այստեղ չե: Շատ

Հեռու չե, — աքսորում:

Լեպոռելլո

Յեվ փառք ասածո:

Վորքան հեռու չե—լավ ե: Հնար լիներ —
Բոլոր նըմաններին խեղդել ծովում:

Դոն Գուան

Ի՞նչ: Ի՞նչ ես դուրս տալիս:

Լեպոռելլո

Հըռեք, փորձում եմ:

Դոն Գուան

Կոմանդորին, ուրեմն, այստեղ թաղել են:

Վաճակաճ

Այստեղ: Յեվ կինն, ահա կանգնել ե նրա
Արձանը, և զալիս ե որն ամեն ախտեղ
Աղոթելու նրա հոգու համար
Յեվ վողբալու:

Դոն Գուան

Տարորինակ ալրի չե:

Յեվ ի՞նչ—սիրուն ե:

Վաճակաճ

Ո, կնոջ գեղեցկությամբ

Մենակյացներըս չպիտք ե հրապուրվեք,
Սակայն՝ ստելը—մեղք ե. սրբակրոնն ել
Կասի, վոր նա չքնաղ ու հրաշագեղ ե:

Դոն Գուան

Իզուր չե, վոր խանդոտ եր հանգուցյալը.
Նա Դոնա Աննային պահում եր փակ,
Յեվ չը տեսավ մեղնից վոչ վոք նըրան:
Կուզենայի խոսել չե: Նրա հետ:

Վաճակաճ

Ո՛, Դոնա Աննան ալր մարդու հետ այժմ
Ել չի խոսում:

Դոն Գուան

Իսկ ձեզ հետ, տեր իմ հալր:

Վաճակաճ

Իմ գործն ուրիշ ե. կրճավոր եմ չիս:
Ահա ե նա:

Մտնում ե Դոնա Աննա

Դոնա Աննա

Բացեք ինձ դուռը, հայր իմ:

Վաճակա՛ն

Իսկույն, Սենյորա: Յես սպասում եմ ձեզ:

Դոնա Աննան հետեվում ե Վաճականին

Լեպորելլո

Դեհ, ի՞նչ կասեք:

Դոն Գուան

Այրիական սև քողը

Ծածկել եր նրան թմրողջովին: Յե՛վ սոսկ
Բարակ և նեղ կըրունկն եր, Վոր տեսա:

Լեպորելլո

Այդ ել ե բավ: Յերևակայությամբ ձեր
Վայրկենապես պակասը կը լրացնեք, —
Չե՞ նա ձեզ մոտ նկարչից ավելի ճարպիկ ե:
Յե՛վ մեկ չե ձեզ համար—ըսկսել հոնքից,
Թե՛ Վոտքերից:

Դոն Գուան

Լըսի՛ր ինձ, Լեպորելլո,

Պիտի ծանոթանամ յես:

Լեպորելլո

Դեհ, տեսեք:

Պականս ել այդ եր: Ամուսնուն սպանեց, —
Յե՛վ խեղճ այրու արցունք տեսնելն ե հոգսը:
Անխիղճ եք դուք:

Դոն Գուան

Սակայն՝ արդեն մթնել ե:

Քանի չերկնում լուսին դեռ չի ծագել
Յե՛վ չի շողվել լուսով այս մութ խավարը,
Մտնե՛ք Մադրիդ:

Լեպորելլո (հիմն իրեն)

Վորպես մի գող՝ իմ գրանդը

Սպանական՝ լուսնից պահված, սպասում ե
Խավարի: Նզովյալ դու կյանք: Արդյոք յերկմը եմ
Դեռ հետը քարշ գալու: Իրավ, ել ուժ չկա:

II ՊԱՏԿԵՐ

Սենյակ: Ընթրիք Լաուրայի մոտ

Առաջին ելուր

Յերդվում եմ քեզ, Լաուրա, անթերի յեր
Յե՛վ կատարյալ այսոր վարպետ քո խաղը:
Վորքան դու ճիշտ ելիր քո դերը ըմբռնել:

Յերկորդ

Ինչպե՛ս ելիր մշակել: Ի՞նչ խոր ուժով:

Յերկորդ

Յե՛վ ի՞նչ արվեստ:

Լաուրա

Այո, ինձ հաջողվում եր

Այսոր ամեն մի նուրբ շարժումը, խոսքը,
Յե՛վ անկաշկանդ եր ներշնչման աղբյուրը:

Վաճառար հոսում եր խոսքը — և կարծես,
 Նըրանց անհոգ չեղնում եր այդ պահին
 Վնչ սարուկ հիշողութունն, այլ՝ սիրտը...

Առաջին

Ճիշտ ե:

Հիմա ել դեռ փայլում են քո աչքերը,
 Այտերդ ել ջերմ ու վառ են, — չե՛ անցնում
 Դեռ քո հրճվանքը: Մի թողնիր, Լաուրա,
 Վոր ապարդյուն պաղի. յերգիր, Լաուրա,
 Յերգիր մի բան:

Լաուրա

Տվեք ինձ իմ կիթառը:

Յերգում ե.

Բոլորը

О bravo! bravo! Հրաշք ե: Աննաման ե:

Առաջին

Ո՛հ, շնորհակալ ենք: Մի՛րտը մեր դյուծում ես,
 Ով դու, կախարդ: Կյանքի վայելքներից
 Մեն մի սիրուն ե խոնարհվում մուգիկը,
 Մակայն՝ և սերն ել մեղեդի յե... Տեա —
 Զգացված ե մուլլ քո հյուր կարևոր ինքը:

Յերկորդ

Ի՞նչ նուրբ նվագ: Յեվ ի՞նչ զգացմունք կա խոր...
 Իսկ ձվ ե գրել խոսքերը:

Լաուրա

Դո՛ն Գուանը:

Դո՛ն Կարլոս

Ի՞նչ: Դո՛ն Գուանը:

Լաուրա

Խոսքերն այդ հորինել ե —

Իմ լավ ընկերն, իմ տարփածուն անմիտ:

Դո՛ն Կարլոս

Սրիկա և անասոված ե քո Դո՛ն Գուանը,
 Իսկ դու, հիմա՛ր ես դու:

Լաուրա

Յնդե՛լ ես դու:

Բայց յես հրաման կըտամ ծառաներիս —
 Սըրախողխող կանեն, թեկուզ և գրանդ ես:

Դո՛ն Կարլոս (վստի յե կանգնում)

Կանչիր, ուրեմըն:

Առաջին

Բավ ե արդ, Լաուրա:

Դո՛ն Կարլոս, մի փքվիր: Նա մոռացել եր...

Լաուրա

Ի՞նչ: Ա՛յն, վոր Գուանն աղնիվ մենամարտում
 Սպանել ե նրա յեղբորը: Ճիշտ ե. շատ ափսոս,
 Վոր վոչ նրան:

Դո՛ն Կարլոս

Անմիտ եր իմ զայրույթը:

Լաուրա

Ահա: Ըզգում ես ինքդ ել, վոր անմիտ ես:
Հաշտվենք, ուրեմըն:

Պոն Կարլոս

Դեհ, ներիր, Լաուրա,
Յես մեղավոր եմ: Բայց՝ ինչ, վոր չեմ կարող
Յես անտարբեր լըսել նըրա անունը:

Լաուրա

Իսկ մեղավոր եմ չես, վոր շարունակ
Լեզվիս վրա հենց այդ միակ անունն ե:

Հյուրը

Ա՛րդ, ի նշան, վոր դու ել զայրացած չես,
Նորից չերգիր, Լաուրա:

Լաուրա

Յեվ բաժանվե՞նք:
Դիշեր ե ուշ: Բայց ինչ չերգեմ չես ձեզ:
Դեհ, լըսեցե՛ք:

Յերգու՛մ ե

Բոլորը

Զքնաղ ե: Աննըման ե:

Լաուրա

Դեհ, այժմ—լույս բարի:

Հյուրերը

Բարի գիշեր:

Գնում են: Լաուրան պահում ե Պոն Կարլոսին

Լաուրա

Դ՛հ, խենթ իմ կատաղի, մընտ ինձ մոտ,
Ինձ դուր յեկար այսօր: դու Դոն Գուանին —
Ինձ հիշեցրիր, չերբ ինձ նախատեցիր
Յեվ կըճյունով ատամդ սեղմեցիր:

Պոն Կարլոս

Ո՛ր, բախտավոր:

Սիրե՛լ ես նրան, ուրեմըն:

Լաուրան դրական ճշամ ե ամուս

Շփտ:

Լաուրա

Ո՛ր, շատ:

Պոն Կարլոս

Սիրում ես և հիմա:

Լաուրա

Հենց միս պահին:
Վ՛հ, չեմ սիրում: Ինչպե՞ս սիրեմ չերկուսը:
Հիմա սիրում եմ քեզ:

Պոն Կարլոս

Ասա, Լաուրա,

Վորքան ե քո տարիքը:

Լաուրա

Տասնևութ:

Դոն Կարյու

Ջահել ես դեռ... Յեվ կը լինես ջահել
 Դեռ հինգ կամ վեց տարի: Յեվ շուրջը քո
 Մի վեց տարի նրանք դեռ կը խմբվեն.
 Քեզ կը շոյեն, կը փաղաքեն, կընվիրեն
 Ու սերենադ կերպեն գիշերալին,
 Յեվ քեզ համար կթափեն իրենց արյունը
 Խուլ ճամբեքին, գիշերը... բայց ահա,
 Յերբ ժամը գա, յերբ խորն ընկնեն աչքերըդ
 Յեվ խորշոմած կողերըդ սեանան,
 Յեվ թեկն արծաթ հյուսվի քո ծամերին,
 Յեվ քեզ ամենն ել անվանեն պառավ, —
 Այնժամ դու ի՞նչ կասես:

Լաուրա

Այնժամ: Ինչո՞ւ

Խորհել հիմա: Յեվ ի՞նչ խոսքեր են դրանք:
 Թե՛ քո մտքերը մշտապես ալդպես են:
 Ո՛ր, յեկ—ե բաց այս դուռը: Ի՞նչ խաղաղ յերկինք ե:
 Ջերմ ուն անշարժ: Յեվ կխորոհի ու սարգենու
 Բույրով ե լի գիշերը: Շող լուսինը
 Փայլում ե թավ ու մութ կապույտ յերկնում—
 Յեվ պահակները ձայնակցում են.—պարզ ե...
 Իսկ հյուսիսում, հեռու, անդ, Պարիզում,
 Թերևս սև ամպեր են կուտակվել,
 Մաղում ե պաղ անձրևն ու՛ հողմ ե ցուրտ:—
 Ի՞նչ գործն ե մեր: Լըսի՞ր ինձ, Կարյու,
 Յես պահանջում եմ, վոր ժպտաս իսկույն...
 Այդպես:

Դոն Կարյու

Ո՛ր, դե չքնաղ իմ:

Դուռը ծեծում եմ

Դոն Գուան

Հե՛յ, Լաուրա:

Լաուրա

Այս հիվ ե: Ո՞վ ձայնեց ինձ:

Դոն Գուան

Դուռը բաց:

Լաուրա

Բայց... միթե... Տեր իմ...

Բաց ե ամուս դուռը: Մտնում ե Դոն Գուանը

Դոն Գուան

Ա՛, վողջույն:

Լաուրա

Դոն Գուան...

Դոն Կարյու

Ինչպե՛ս: Դոն Գուան...

Լաուրան փաքվում ե նրան

Դոն Գուան

Լաուրա, սիրելի՛ս

Համբուրում ե

Ո՞վ կա քեզ մոտ, իմ լավ Լաուրա...

Դոն Կարլոս

Յես,

Դոն Կարլոսը:

Դոն Գուան

Ա՛հ, շատ անակնկալ եր:

Յես վաղը քո խոնարհ ծառադ եմ:

Դոն Կարլոս

Վո՛հ:

Հիմա—խսկո՛ւյն:

Լաուրա

Դոն Կարլոս, վերջ տվե՛ք:

Դուք փողոցում չեք—դուք ինձ մոտ եք, տեր:—
Բարեհաճե՛ք թողնել ինձ:

Դոն Կարլոս (ներս չլսելով)

Դեհ, սպասում եմ:

Քո սուրը, չէ՞, քեզ մոտ ե:

Դոն Գուան

Ա՛, խնդրեմ,

Թե սիրտդ անհամբեր ե:

Մեծամարտում եմ

Լաուրա

Ա՛յ, ա՛յ, Գուան...

Ընկնում ե մահճակալին: Դոն Կարլոսն ընկնում ե

Դոն Գուան

Յեկիր, Լաուրա, վերջացավ:

Լաուրա

Ա՛հ, ի՞նչ ե:

Սպանվե՛լ ե: Շատ սիրուն: Իմ սենյակում...

Յես ի՞նչ անեմ հիմա. խելած, անմիտ:

Սրան յես հուր նետեմ ապա:

Դոն Գուան

Թերեւս—

Դեռ վողջ ե նա...

Զննում ե մարմինը:

Լաուրա

Այո՛, Տես, վողջ ե: Անխճա՛լ:

Ծակել ես սիրտն ուղիղ — կը վրեպեյ՞ր դու,—

Արյուն ել չի հոսում նրա յիռանկյուն վերքից,

Իսկ շունչն արդեն մարել ե — լմվ ե:

Դոն Գուան

Ի՞նչ արած:

Այդ ցանկությունն իրենն եր:

Լաուրա

Ե՛հ, Դոն Գուան:

Իրավ, ախուր ե շատ: Անվերջ խաղեր —

Յեվ՝ միշտ ու հար անմեղ... Դեհ, վա՛րտեղից:

Վաղճուց այստեղ ես:

Դոն Գուան

Հենց նոր եմ յես յեկել:

Այն ել—գողտուկ, — ինձ չէ՞ վոր չեն ներել դեռ...

ԼԱՌԱՐԱ

Յեւ ճենց իսկույն Լաուրայիդ հիշե՛լ ես:
Ա՛հ, ինչ վոր լավ ե — լավ ե: Բայց թողնե՛ք, —
Ձեմ հավատում: Պատահաբար անցել ես —
Տեսել ես տունը:

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Վո՛չ, իմ լավ Լաուրա:

Ասի՛ թող Էկպորելլոն: Յես իջել եմ
Արվարձանում, մի անիծյալ փոսում: Լաուրա,
Յես Մադրիդում փնտրել եմ քեզ:

Համբուրում ե

ԼԱՌԱՐԱ

Անգի՛նքս...

Սպասիր, սակայն... դիակ կա... Բնչ անենք...

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Մընա՛ թող... վաղ լուսաբացին նըրան
Յես կը տանեմ՝ վրան քաշած թիկնոցըս
Յեւ կը դնեմ ճամբի վրա:

ԼԱՌԱՐԱ

Միայն թե՛

Ջգույ՛, վոր քեզ վոչ վոք չը նկատի:
Ինչ լավ արիւր, վոր ներս չեկար սենյակը
Դու մեկ վայրկյան առաջ: Այստեղ, ինձ մոտ
Ընթրում եյին բարեկամներդ: Նրանք
Հենց նոր յեկան: Յնթե հանդիպելիք նըրանց ել...

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Լաուրա, դու վաղուց ես նրան սիրում:

ԼԱՌԱՐԱ

Այդ համ: Դու դառանցում ես:

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Լավ: Ասա՛ ինձ,

Ապա քանի՞ անգամ դավաճանել ես
Իմ բացակայությամբ:

ԼԱՌԱՐԱ

Իսկ դո՛ւ, շվայտը:

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Ասա... բայց՝ վոչ... Հետո դեռ կը խոսենք...

III ՊԱՏԿԻ

Կոմանդորի արձանը

ԴՈՆ ԳՈՒԱՆ

Ամեն ինչ լավ ե: Սպանելով անկարծ
Դոն Կարլոսին, այստեղ պահվել եմ յես՝
Ինչ մենակյաց խոնարհ, և որն ամեն
Տեսնում եմ իմ չքնաղ այրուն, և նա ել,
Կարծես, ինձ նկատել ե: Մինչ այսոր
Փորձում եյինք իրար: Սակայն արդեն
Ջրույցի կըռնվեմ այսոր. — ել ժամ ե:
Ինչպե՛ս ըսկսեմ: — «Ներեք ինձ»... Կամ թե՛ վոչ —
«Մենյորա»... Ա՛հ, ինչ բա՛ւ վոր գա լեզվիս,
Այն ել կասեմ, — առանց պատրաստվելու,
Վորպես սիրո հանկարծական յերգիչ մի...
Բայց՝ ժամ ե արդ, վոր գա: Առանց նըրա —

Կարծում եմ յես—տխրում ե Կոմանդորը:
 Յեվ ի՞նչ հըսկա յե նա՝ այստեղ կանգնած:
 Այս ի՞նչ ուսեր են: Շիտակ մի Հերկուլես:
 Իսկ ինքը՝ հանգուցյալն — վրտիտ եր, փոքր —
 Այստեղ — թե ձեռքը յերկարեր — հազիվ թե
 Կարողանար անգամ հասնել քթին իր:
 Եսկուրյալից այն կողմ, յերբ դեմ յեկանք, —
 Ընկավ նա իմ սըրից և լուռ մարեց,
 Ինչպես միջատ անզոր գնդապետի վրա, —
 Իսկ եր հըպարտ ու խրոխտ — վոգով դաժան եր...
 Ահա և նա:

Մտնում ե Դոնա Աննա

Դոնա Աննա

Դարձյալ աչստեղ ե: Հայր իմ,
 Խըռովեցի կրկին յես ձեր խոնարհ աղոթքը —
 Ներեք ինձ:

Դոն Դուան

Ձեզ, Ներումըն յես պիտի հայցեմ
 Ձեզնից, Սենյորա: Յես եմ խանդարում թերևս,
 Վոր վիշտը ձեր ազատուրեն բացվի:

Դոնա Աննա

Վոչ, վոչ, Դ հայր իմ, վիշտըս խորն ե շատ,
 Առջևը ձեր աղերսն իմ բարձրանալ
 Դեպի յերկինք կարող ե: Յես խնդրում եմ —
 Իմ աղոթքին մեկ... ել ձեր ձայնը:

Դոն Դուան

Ձեզ հետ աղոթք ասեմ յես, Դոնա Աննա:
 Բայց յես արժան չեմ բարձր այդ բախտին:
 Ձեն հանգըզնի իմ մեղավոր շուրթերը
 Ձեր անարատ աղոթքը կրկնենի —
 Յես լուկ հեռվից, անհուն ակնածությամբ
 Նայում եմ ձեզ, յերբ խոնարհված լռին՝
 Փըռում եք դուք ձեր սևաթույր վարսերը
 Մարմարիոնին գունատ: Այն ժամ թվում ե,
 Թե անտեսիլ հրեշտակ իջավ շիրմին,
 Յեվ խոռվահույզ սրտում իմ՝ այն պահին
 Ձրկա աղոթք աչկես: Լուռ զմայլվում եմ
 Յեվ մըմնջում — Դ յերանի նրան, ում քարն
 Այս պաղ ձեր յերկնային շնչով ե ջերմացած
 Յեվ վոդողված սիրո ձեր արցունքով:

Դոնա Աննա

Տարորինակ խոսքեր են:

Դոն Դուան

Ա՛հ, Սենյորա:

Դոնա Աննա

Ի՞նչ... մոռացել եք:

Դոն Դուան

Ի՞նչ: Վոր անարժան

Մի ճգնավոր եմ յես, վոր մեղավոր
 Իմ ձայնն աչստեղ չպիտի հնչի շատ բարձր:

Դոնա Աննա

Այնպես թվաց ինձ... Յես չըհասկացա...

Դոն Գուան

Ա՛հ, զգում եմ յես. ամեն ինչ իմացել եք:

Դոնա Աննա

Յես իմացել եմ: Ի՞նչ:

Դոն Գուան

Վոր վանական չեմ —

Յեվ ծընկաչոք հայցում եմ ձեր ներումըն:

Դոնա Աննա

Աստված իմ... վեր կացեք... բայց ով եք դուք:

Դոն Գուան

Սիրո անհույս կրքի դժբախտ մի գոհ եմ:

Դոնա Աննա

Ո՛ր, տեր իմ... Տեղն ե միթե այս շիրմի մոտ:
Գնացեք իսկույն:

Դոն Գուան

Մի պահ լուկ, Դոնա Աննա,
Միայն մի պահ:

Դոնա Աննա

Իսկ մարդ յեթե մտնի:

Դոն Գուան

Սենյորա, դուռը փակ ե: Մեն մի պահ:

Դոնա Աննա

Ա՛հ, ի՞նչ: Դուք ի՞նչ եք պահանջում:

Դոն Գուան

Մահ: Մահ:

Ո՛ր թող մեռնեմ հիմա այստեղ, ձեզ մոտ:
Յեվ թող այստեղ թաղեն անբախտ աճյունն իմ,
Վնչ ձեր սրտին մոտիկ շիրմի կողքին,—
Այստեղ չե, վնչ մոտիկ, հեռու մի տեղ,—
Այնտեղ—դռան մոտ, ուղղակի շեմին,
Վոր իմ քարին շփվել կարողանաք
Վոտքով թեթև ու նուրբ, կամ՝ ըզգեստով,
Յերբ վոր կը գաք շիրմին դուք այս հըպարտ
Խոնարհելու ձեր գլուխը և լալու:

Դոնա Աննա

Ցնդե՛լ եք դուք:

Դոն Գուան

Բայց միթե մահ ցանկանալ—
Նշան ե ցնդելու, ո՛ր Դոնա Աննա:
Թե խելագար յես լինելի, այնժամ
Կը ցանկալի ապրել, կվառվեր իմ հույսը՝
Դնքույշ սիրով ձեր սիրտը զրավելու:
Թե խելագար յես լինելի, այնժամ
Ամեն գիշերն յես կանցնելի ձեր դրանը,
Սերենագով ձեր նիրհը խռովելով:
Չելի թագնավիլ յերբեք,— ընդհակառակը՝
Կուզենայի, վոր ամենուր տեսնեք ինձ:
Թե խելագար յես լինելի, յերբեք
Չելի տանջվիլ յես լուռ...

Դոնա Աննա

Այդպիս եք դուք

Լքում:

Պոն Պուան

Դիպվածն եր, Դոնա Աննա, մեն դիպվածը,
Վոր ինձ շփոթեց: Այլ կերպ՝ յերբեք ել ձեզ
Իմ վըշտախոր խորհուրդը չեր հառնի:

Պոնա Աննա

Յեվ դուք այդպես վաղձեց եք ինձ սիրում:

Պոն Պուան

Վաղուց, թե՛ վոչ,—անհայտ ե ինձ, Սենյորա,
Բայց այդ պահից միայն գիտեմ արժեքը
Յես վաղանցիկ կյանքի, սոսկ այդ պահից
Կռահել եմ յես, թե ինչ ե բերկրությունը:

Պոնա Աննա

Թողեք ինձ—դուք վտանգավոր մի մարդ եք:

Պոն Պուան

Վտանգավոր: Ինչո՞վ:

Պոնա Աննա

Լըսում եմ ձեզ անով:

Պոն Պուան

Յես կը ֆեջեմ,—միայն թե մի վանեք
Նրան, ում համար սփոփանք ե մեն ձեր տեսքը:
Հույսեր հանդուգն՝ յես չեմ տաժում յերբեք,
Ձեմ պահանջում վոչինչ, սակայն յես պետք ե,
Վոր ձեզ տեսնեմ, թե ապրելու արդեն
Դատապարտված եմ:

Պոնա Աննա

Ա՛հ, գնացեք: Մա տեղ չե
Նման խոսքերի, այդ խենթության: Իսկ վաղը
Կը դաք ինձ մոտ: Յեթե դուք արդ յերգվում եք
Պահել դեպ ինձ ձեր նույն այդ խոր հարգանքը,—
Ձեզ կընդունեմ, բայց իրիկունը—ուշ...
Յես վոչ վոքի՛ ինչ վոր այրեացել եմ՝
Ել չեմ տեսնում...

Պոն Պուան

Հրեշտակ իմ, Դոնա Աննա,
Թող ըստփոփի ձեր վիշտը տերն այնպես,
Ինչպես վոր դուք՝ տառապյալիս դժբախտ:

Պոնա Աննա

Դեհ, գընացեք:

Պոն Պուան

Ա՛հ, ևս մի վայրկյան:

Պոնա Աննա

Ուրեմն—յես կերթամ: Սրտիս աղոթք ել
Այսոր չըկա: Փոթորկեցիք հոգիս
Ձեր աշխարհիկ խոսքով: Վաղձեց, վաղձեց ե
Նրանցից ավանջն իմ հետ ե սովորել:
Ձեզ վաղը կընդունեմ:

Պոն Պուան

Դեռ չեմ համարձակվում
Յես հավատալ, իմ բերկրությունն ապրել:
Ձեզ վաղը կը տեսնեմ... Յեվ վո՞չ այնտեղ,
Յեվ վո՞չ գաղտագողի:

Դոմա Աննա

Ա՛հ, վաղը, վաղը,
Իսկ ձեր անձնը:

Դոն Գուան

Դիեգո զե-Կալվադո:

Դոմա Աննա

Վողջոյն ձեզ, Դոն Դիեգո:

Գնում ե

Դոն Գուան

Լեպորելլո:

Մտնում ե Լեպորելլոն

Լեպորելլո

Լըսում եմ, տեր իմ:

Դոն Գուան

Լավ իմ, Լեպորելլո,
Յես չերջանիկ եմ... «վաղը» — «իրիկունը»...
Իմ Լեպորելլո, վաղը պատրաստիր...
Յես չերջանիկ մանուկ եմ...

Լեպորելլո

Դոնա Աննան

Ձեզ հետ խոսել եմ Խոսք չերկու թերևս
Նա սիրալիր այստեղ ասել ե ձեզ,
Կամ՝ որհնություն եք դուք տվել նրան:

Դոն Գուան

Վա՛հ, Լեպորելլո, վոչ, ժամադրություն,
Ժամադրություն կը տա ինձ վաղը:

Լեպորելլո

Միթե:

Ո՛ր, ալրիներ, բոլորդ այգալես եք...

Դոն Գուան

Ա՛հ, կուգելի

Յերգել, գրկել ամբողջ արար-աշխարհը...

Լեպորելլո

Իսկ կոմանդորը: Ի՞նչ կասի ձեզ նա:

Դոն Գուան

Կարծում ես, վոք նա կըսկսի խանդել:
Իհարկե—վոչ: Նա խելացի մի մարդ եր
Յեվ մեռնելուց հետո, հարկավ, խոհեմ ե:

Լեպորելլո

Վոչ, վոչ, պարոն,—նայեք ապա արձանը:

Դոն Գուան

Բայց—ի՞նչ ե:

Լեպորելլո

Նա, կարծես, նայում ե ձեզ

Յեվ—բարկանում:

Դոն Գուան

Գնա դու, Լեպորելլո:

Խնդրիր նրան, շնորհ բերել ինձ մոտ,—
Կամ՝ վոչ—թող Դոնա Աննային գա վաղը:

Լեպորելլո

Արձանը հյճւր կանչել: Ինչո՞ւ:

Պոն Պուան

Իհնարկե—

Վոչ նրա համար, վոր զրույց չերկար սկսենք:
Խնդրիր, թող Դոնա Աննային գա վաղը—
Ուշ իրիկունը գա և թող պահակ
Կանգնի նրա դրան:

Լեպորելլո

Դա ի՞նչ կատակ է:

Յեվ այն ել—համ հետ:

Պոն Պուան

Դէհ:

Լեպորելլո

Բայց...

Պոն Պուան

Գընա:

Լեպորելլո

Ո՛ր, մեծափառ և սքանչելի արձանըդ,
Պարոնն իմ, Դոն Գուանը, ձեզ խնդրում է
Շնորհ բերել... Աստված վկա, անզոր եմ,—
Խրթին է...

Պոն Պուան

Ա՛հ, վախկոտ... Յես քեզ...

Լեպորելլո

Թողեք ինձ...

Պարոնն իմ, Դոն Գուանը, ձեզ խնդրում է,
Վոր վաղը գաք և ձեր այրու դրան
Կանգնեք պահակ...

Ի նշան համաձայնության՝
արձանը գլխով է անում

Ա՛յ... Ա՛յ...

Պոն Պուան

Դհհ, ի՞նչ է:

Լեպորելլո

Ա՛յ...

Ա՛յ, ա՛յ... կմեռնեմ:

Պոն Պուան

Բայց—ի՞նչ էր պատահեց:

Լեպորելլո (Գլուխը շարժելով)

Արձանը... Ա՛յ...

Պոն Պուան

Դու վողջուհում ես:

Լեպորելլո

Վհհ:

Վոչ չես, այլ—նա:

Պոն Պուան

Ինչե՞ր ես զուրս տալիս:

Լեպորեյլո

Փորձեք ինքներըդ:

Պոն Պուան

Դեհ, նայիր, սրիկն:

Արձանից

Յես, կոմանդոր, խնդրում եմ գալ քեզ վաղը
Քո այրիիդ, վորտեղ կլինիս և յես,—
Յե՛վ լուռ պահակ կանգնել դրան: Կըզմա:

Արձանը նորից գլխով ե տնում

Ո՛ր, տեր իմ:

Լեպորեյլո

Դեհ, ասում եյի...

Պոն Պուան

Գնանք:

IV ՊԱՏԿԵՐ

Դոնա Անայի սենյակը: Դոն Պուան և Դոնա Աննա

Պոնա Աննա

Ահա, ինձ մոտ եք, Դոն Դիեգո, բայց—
Վախենում եմ իմ տըխուր զըրույցը
Ձեզ ձանձրալի լինի: Մի խեղճ այրի՛
Յես հար կորուստն եմ իմ հիշում: Արցունք,
Փըպիտ խառնում եմ, ինչ ապրիլ ամիսը...
Ինչո՞ւ չեք լուռ:

Պոն Պուան

Ընթանչանում եմ լուռ

Յե՛վ խոր մտքով աչն, վոր ալատեղ մեհնակ

Ձեզ հետ եմ, Դոնա Աննա, վնչ ախտեղ—
Անշուշ բախտավորի շիրմի առջև:
Յե՛վ չեմ տեսնում ձեզ ծնկաչոք ալիս
Մարմարիոնե ձեր ամուսնու առջև:

Պոնա Աննա

Խանդոտ եք, Դոն Դիեգո: Դազաղում ել
Նա ձեզ տանջում ե, միթե:

Պոն Պուան

Ա՛հ, սենյորա,

Չպետք ե յես խանդեմ: Նա չե՞ վոր ձեր
Ընտրյալն եր—կոմանդորը:

Պոնա Աննա

Վնչ, իմ մայրն

Ինձ կարգադրեց Դոն Ալվարին գընալ,—
Մեր որը նեղ եր, Դոն Ալվարն՝ հարուստ:

Պոն Պուան

Ո՛ր, յերջանիկ: Իր սին գանձերը նա—
Իրրե նվեր—բերեց իր ղեցուհուն, ահա թե
Ինչու նա ճաշակեց զըրախտը: Յես ել՝
Թե տեսնեյի ձեզ վաղ, ինչ հրճվանքով
Կտայի կոչումն իմ, իմ գանձերը, վողջը
Ձեր մեն հատիկ ու քաղցր հայացքին:
Կը դառնայի ձեր սուրը կամքի ըստրուկը,
Ամեն ուզածը ձեր կուսումնասիրեյի,
Կը կանխելի ամենը յիս աչն, վորպեսզի կյանքը ձեր
Անընդհատում դյուլթի՛ յերազ լիներ:
Ավաղ,— ուրիշ եր իմ ճակատագիրը:

Պոնա Աննա

Դիեգո, բավ ե: Մեղանչում եմ չես
 Ձեզ լսելով,—սիրելի ձեզ չեմ կարող—
 Այլին պիտի շիրմին ել միտ հաստատ:
 Դիտե՞ք արդյոք՝ թե՛ Դոն Ալվարն ինչպե՞ս
 Սիրում եր ինձ: Ո՛ր, Դոն Ալվարն, ինձը կե,
 Ձեր ընդունի սիրահարված կնոջ,
 Յեթե այրիանար.—ամուսնական սիրույն
 Կըմնար հավատարիմ

Պոն Գուան

Ո՛ր, Դոնա Աննա,
 Իմ սիրտը մի տանջեք, հար հիշելով
 Ձեր ամուսնուն: Ել բավ ե ինձ պատժեք,—
 Թեև պատժի արժան եմ չես:

Պոնա Աննա

Ինչո՞ւ:

Դուք վոչ վոքի կապված չեք,—ձե՛շտ չե, միթե,—
 Կապով անխախտ: Ինձ սիրելով՝
 Արդար եք դուք առջև չեղելիս և իմ:

Պոն Գուան

Ա՛հ, ձեր,—ս՝ տեր իմ:

Պոնա Աննա

Միթե հանցավոր եք
 Դուք իմ առջև: Ասեք ինչո՞վ:

Պոն Գուան

Ո՛ր վոչ:

Ո՛ր վոչ, չերեք:

Պոնա Աննա

Դիեգո, ի՞նչ ե այս,—
 Արդա՞ր չեք իմ առջև: Բայց ի՞նչ ե, ասացե՛ք:

Պոն Գուան

Յերեք:

Պոնա Աննա

Դիեգո, շատ տարորինակ ե:
 Յեա ձեզ խնդրում եմ. պահանջում եմ:

Պոն Գուան

Վոչ:

Պոնա Աննա

Ա՛հ, դուք այդպե՞ս եք իմ կամքին հըլու,
 Իսկ ի՞նչ եյիք ասում հենց նոր դուք ինձ—
 Վոր ինձ ըստրուկ կուզենայիք լինել:
 Կը բարկանամ, Դիեգո, դեհ, ասեք—
 Դուք իմ առջև ինչո՞վ եք հանցավոր:

Պոն Գուան

Բայց դուք

Կատեք այնժամ ինձ, չեմ համարձակվում:

Պոնա Աննա

Վոչ, վոչ: Ներում եմ ձեզ կանխավ: Սակայն՝
 Պիտի ասեք ինձ:

Պոն Գուան

Մի ձգնեք բանալ

Այդ ահավոր և սպանիչ զաղտնիքը:

Դոնա Աննա

Ի՞նչ, ահալ՜որ: Ինչո՞ւ յեք ինձ տանջում:
 Յեա անսահման հետաքրքիր եմ: Ի՞նչ ե:
 Յեվ իմ առջև ինչպե՞ս եք մեղանչել:
 Ձեզ չեմ տեսել յերբեք: Իսկ թըշնամի
 Չըկա և չի լեղել: Լոկ մարդասպանն ե
 Միակ վոր կա:

Դոն Գուան (ինքն իրեն)

Հանգուցն ահա բացվում ե:
 Ասեք ինձ արդ. Դոն Գուանը չարաբախտ
 Ծանոթ ե ձեզ:

Դոնա Աննա

Ո՛հ, վոչ: Նըբան մինչ որըս
 Յեա չեմ տեսել:

Դոն Գուան

Իսկ թըշնամանք արդյոք
 Չունե՞ք նրա հանդեպ:

Դոնա Աննա

Պատվո իմ պարտքն ե:
 Սակայն՝ տեսնում եմ, վոր ջանում եք դուք
 Շեղվել իմ պարզ հարցից: Դոն Դիեգո, բավ ե,—
 Յեա պահանջում եմ:

Դոն Գուան

Իսկ լեթե Դոն Գուանը
 Մի որ ձեզ հանդիպե՞ր:

Դոնա Աննա

Յեա կըխմե՞ի
 ար սիրտն իմ սուր դաշույնը:

Դոն Գուան

Դո՛նա Աննա,
 Դաշույնը բեր: Ահա իմ կուրծքը:

Դոնա Աննա

Դիեգո,
 Այս ի՞նչ ե:

Դոն Գուան

Յեա Դիեգո՛ չեմ—Դոն Գուանն եմ:

Դոնա Աննա

Աստված իմ, վո՛չ... Անկարելի չե, սուտ ե:

Դոն Գուան

Դոն Գուանն եմ չեա:

Դոնա Աննա

Սըտում եք:

Դոն Գուան

Ամուսնուդ
 Սպանել եմ չեա: Յեվ չեմ ցավում բնավ,
 Վոր այդ յեղավ, և չեմ զղում յերբեք:

Դոնա Աննա

Ի՞նչ խոսք եր այդ: Վոչ, վոչ, անկարելի չե:

Դոն Գուան

Այո, Դոն Գուանն եմ—և սիրում եմ քեզ:

Դոնա Աննա (ընկնելով)

Վորտեղ եմ... Ո՛ւր եմ... Տեր իմ...

Դոն Գուան

Ո՛ր, չերկինք,

Այս ի՞նչ եր, ի՞նչ եր այս. իմ Դոնա Աննա,
Յելիր, զարթիր, ուշքի յեկ, քո Դիեգոն,
Քո ստրուկն, ահա, առջևդ ե...

Դոնա Աննա

Թող ինձ այժմ...

քույլ

Ո՛ր, թշնամի լես ինձ: Խլել ես այն,
Ինչ թանկ եր ինձ համար...

Դոն Գուան

Ձքնաղ հրեշտակ:

Կյանքովս անգամ քավել իմ սև հանցանքը
Պատրաստ եմ լես, և ծնկաչոք սպասում եմ—
Կըհրամայես—կմեռնեմ և կամ կապրեմ—
Լոկ քեզ համար:

Դոնա Աննա

Դոն Գուանն ես դու, ուրեմըն...

Դոն Գուան

Իրավ չե—նրան նկարագրել ելին—
Ինչ ժանա մի չարագործ—ս, Դոնա Աննա,

Շըշունջըն այդ մասամբ թերևս իրավ ե,—
Հոգնած խղճի վրա գուցե և շատ
Չարիք ե ծանրացած: Յես շատ յերկար
Յեղել եմ շվայտության ճարտար մի սան,
Բայց այն որից, ինչ լես տեսել եմ ձեզ—
Թվում ե ինձ—հոգով վերածնվել եմ:
Ձեզ սիրելով՝ սիրում եմ լես պարկեշտը
Յեվ առաջին անգամ նրա առջև
Իմ դողացող ծնկերն եմ խոնարհում:

Դոնա Աննա

Գիտեմ, գիտեմ, Դոն Գուանը պերճախոս ե,
Լսել եմ լես—նա խորամանկ փորձիչ ե,
Հմայող մի դե: Քանի՜ դժբախտ կանայք եք
Դուք կործանել:

Դոն Գուան

Նրանցից և վոչ մեկին

Մինչ այժմ չեմ սիրել:

Դոնա Աննա

Յեվ հավատամ լես,
Վոր Դոն Գուանի սա սերն ե առաջին,
Վոր չի փնտրում կրկին նա նոր մի գոհ:

Դոն Գուան

Յեթե լես ձեզ խաբել ցանկանալի,
Ինչո՞ւ պիտի տայի լես ան անունը,
Վոր դուք լսել անգամ չեք ցանկանում:
Ել ձևը միայն խաբախությունն ու դավը:

Դրամատիկ. հատվածներ—4

Դոնա Աննա

Ա՛հ, թի գլխուհի Բալց դուք ինչպե՞ս եք ներս
 Յեկեկ ալստեղ, Ձեզ ճանաչել կարող եմ՝
 Յեզ անխուսափելի կլինի ձեր մահը:

Դոն Գուան

Ի՞նչ մահ: Յես անարտունջ կըտամ իմ կյանքը
 Տեսակցության պայծառ ժամի համար:

Դոնա Աննա

Սակայն՝

Ինչպե՞ս պիտի գնաք դուք, անըզգույշ:

Դոն Գուան (համբուրելով Որս ձեռքը)

Յեզ դուք դժբախտ մի Դոն Գուանի համար եք
 Խորհում: Ուրեմն՝ ատելութուն չըկա՝
 Քո լերկնամաքուր հոգում, ո՛ր Դոնա Աննա:

Դոնա Աննա

Ա՛հ, թե ատել լես ձեզ կարենալի...
 Սակայն արդեն մեզ հարկ ե քաժանվել:

Դոն Գուան

Իսկ լճքը կրկին կըտեսնըվենք:

Դոնա Աննա

Անհայտ ե: —

Մի որ... Շուտով:

Դոն Գուան

Իսկ վաղը:

Դոնա Աննա

Ո՛ւր:

Դոն Գուան

Ալստեղ:

Դոնա Աննա

Ո՛հ, Դոն Գուան, իմ սիրտն այնքան անզոր ե...

Դոն Գուան

Ի նշան ներման—մի հաշտության համբույր

Դոնա Աննա

Ա՛հ, ժամ ե—գնա:

Դոն Գուան

Միակ խաղաղն ու պաղը...

Դոնա Աննա

Վորքան համառն ես դու... Դեհ, մո համբույրը...
 Այս ի՞նչ աղմուկ ե... Շուտ, փախիք, Դոն Գուան...

Դոն Գուան

Դեհ, մնա քարե, ցտեսութիւնն, չընաղդ իմ...

(Գնում է, ապա նորից վազում է ներս)

Ա՛...

Դոնա Աննա

Ի՞նչ եր այդ... Ա՛...

(Մտնում է Կոմսիտի արձանը: Դոնա Աննան քնկնում է):

Արձանք

Յես յեկա—կանչել ես...

Դոն Դուան

Ո՛ր, տեր իմ... Դոնա Աննա...

Արձանք

Թող նըրան:

Ել վերջ արդեն: Դողում ես դու, Դոն Դուան:

Դոն Դուան

Յես: Վոչ, կանչել եմ քեզ, ուրախ եմ, վոր յեկար:

Արձանք

Տուր ձեռքդ:

Դոն Դուան

Ձեռքս—անա: Ո՛ր, ծանր ե շատ

Նրա քարե ձեռքի ամուր սեղմումը...

Ա՛հ, թող ինձ, թող... Ո՛ր արձակիր իմ ձեռքը:

Յես կործանվում եմ—վերջ... Ո՛ր, Դոնա Աննա...

Դորվում եմ անգուղիք:

Վ Ե Ր Ձ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ՅԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Յերեք տարուց հետո, 1937 թվին, լրանում է ուսական պո-
եղիայի ամենախոշոր և ամենապայծառ դեմքի՝ մեծահանձար Ալեք-
սանդր Միրոյանի Պուշկինի մահվան հարյուրամյակը: Վոչ մի կաս-
կած չկա, վոր խորհրդային վողջ հասարակայնությունը, նրա ար-
վեստի և մասնավորապես՝ դրականության ջոկատը մեծ ջուլտով և
խորին հարգանքի ամենաջերմ զգացումներով կտոնեն արևափայլ
պոետի անմահության այդ առաջին հոբելյանը:

Պուշկինը մեծ և բազմակողմանի վարպետ է: Նրա՝ մոցարայան
պարզության վճիտ ու խոր հանձարը բարահայտվել է դրական
արվեստի դրեթե բոլոր ճյուղերում. — և՛ դրամայում, և՛ պոեմներում,
և՛ մանր լիբրեկան տողերում, և՛ արձակում, և՛ ժողովրդական
հեքիաթներին վերամշակության մեջ: Նրա չափածո լերկերի կա-
ռուցվածային և լեզվական պարզությունը հասցված է այնպիսի
կատարելության, վորպիսին դեռ մինչև այսօր ել դերադանցված
չէ համաշխարային դրեթե և վո՛չ մի պոետի կողմից: «Պուշկի-
նյան պարզությունը» վաղուց է արդեն վո՛ճ դարձել և բարձրագույն
վորակական գնահատություն և ամեն մի իսկական վարպետի հա-
մար:

Ձեռնարկելով մեծահանձար պոետի ընտիր յերկերի թարգմա-
նության հոբելյանական տարվա նախորդակին, Հայպետհրատը կա-
մենում է վո՛չ միայն նշել այդ խոշորագույն տարեկաթը և հայե-
րեն հրատարակության մասնակից լինել արվեստի այդ նշանավոր
ստեղին, այլև — վոր զլխավորն է — բարձրագույն արվեստի մի
նոր շահմարան էս բանալ մեր աշխատավորական դանդաժաների
առջև, մի շտեմարան, վորտեղ անսպառելի առատություն մեծա-
գույն և կարեւորագույն դանձեր են շողշողում. դանձեր՝ մտքի, զգաց-
մունքների և փիլիսոփայական խորություն:

Բայց չ՛հ վոր Պուշկինն ապրել և ստեղծագործել է միզնից
100-120 տարի առաջ: Ձե՞ս՝ վոր նա ազնվական է յեղել, կալվածա-

տեր, ցարական մի չինովնիկ՝ Նիկոլայ I-ի դատաւարույն աւ-
ժիմի տարիներին: Ինչպէ՞ս և կապում նա մեր ժամանակի հա-
մար արժեքավոր դանձերին և ի՞նչն և, վոր այսօր ամենից ավի-
ւի գնահատելին ենք համարում նրա ստեղծագործական խոշոր ժա-
ռանգութեան մեջ:

Այն գլխավորը, վոր մենք պետք է նշենք այստեղ և ընդգծենք,
այն է, վոր հասած լինելով ազնվական կուլտուրայի ժամանակի բար-
ձունքներին, Պուշկինը ժիւթամանակ և չի՝ միւսում նրա դաստիարակ-
նեղ սահմանափակութեան մեջ: Իբրև իր եպոխայի ամենախելացի
և խոր մտածող մարդկանցից մեկը, Պուշկինը չէր կարող չտեսնել և
տեսնում էր իր դասակարգի սոցիալական դասապարտութեանը,
նրա հասարակական որդանիքի մեջ առաջացած անավոր ճեղքերը:
Իսկ իբրև անանկացած աղնական բնատնիքի մի շառավիղ և զգա-
լի չափով գրական դաս վաստակով ապրող մի պոետ, նա արդէն
զղացել էր «աղնիկ աշխատանքի» բարեմասնութիւնը, ճաշակել էր
աղխատանքի համը: Դեմոկրատական լինքը, Պուշկինն այսպիսով
դեմոկրատացնում և և այն բոլոր տարրերը, վորոնցից բաղկացած
էր հին ազնվական, այսպէս ասենք, — մինչպուշկինյան գրակա-
նութիւնը: Նա ստեղծում և կազմակերպում է իր՝ մինչայժմ իր
պարզութեամբ չգերազանցված լեզուն, վորն այնքա՞ն մոտենում և
խոսակցական լեզվին, պարզացնում է XVIII-րդ դարի ազնվական
գրականութեան բոլոր, այսպէս կոչված, «բարձր» ժանրերը և, վոր
ամենից արժեքավորն է՝ սոսկ «ժամանցի» և կամ իրականութեան
նից «վերանայում» նպատակով ստեղծված գրականութեան փոխարեն
ստեղծում և այն գրականութիւնը, վորը խորապէս ռեալիստա-
կան մի միջոց և դասում՝ կյանքը, իրականութեանը ճշգրիտ
և անխաղախ կերպով ճանաչելու համար:

Դառնալով նույն այս խնդրին, նորերս վախճանված Ան. Վ.
Լուսնաչարսկին իր մի հոդւածում («Еще о Пушкине»)* այսպէս
և արժեքավորում Պուշկինի խոշոր նշանակութիւնը մեր որիւր
համար.

«Պուշկինն անհնարին և խցկել վորեւ Ֆորմուլի մեջ, միա-
ժամանակ վկայական չտալով հենց այդպէս վարկողին՝ իսկ ծայ-

րահեղ սահմանափակութեան և պեղանտիքի իհա՛րկե, Պուշկինի
իդեաներից շատ շատերը պատկանում են դասակարգային ազնվա-
կանութեան մարզին, բնորոշում են սոսկ նրա եպոխան և շատ հե-
ռու յին մեզ հետաքրքրող խնդիրներին: Սակայն՝ դեռ հետ մի-
ասին, Պուշկինն ունի հեղայական և դեռ ևս բնավ չբացված հմո-
ցիւնալ — իդեական այնպիսի մի բովանդակութիւն, վորի նշանա-
կութիւնը հանրամարդկային եւ Ընդ ամին յեռ ուզում էմ առանձ-
նապէս ընդգծել, վոր մենք այժմ ասում ենք այդ՝ «հանրամարդ-
կային» խոսքը բոլորովին այլ իմաստով, քան այդ ասվում էր առաջ-
ներում, քան այդ ասում են յերբեմն մարքսիզմի թշնամիները»:
Յեւ ապա՝

«Քանի դեռ յեռում է պայքարը, քանի դեռ պայքարը խաղ-
նում և և խեղդում ամեն ինչ» — Նեկրասովը մեզ կարող է ավելի
մտաւիկ լինել, քան Պուշկինը: Բայց ահա պայքարն անցնում է, նոր
և չտեսնված թարմ ուժերով լեցուն դասակարգն սկսում է արա-
նայ իր՝ ժառանգողի իրավունքներին, սկսում է ձեռնարկել իր կուլ-
տուրական վիթխարի շինարարութեան... Յեւ վորքան ավելի պի-
տի պարզվի իրեն համար, իր դասակարգի համար, իր ընթերցողի
համար բնութիւնն ու կյանքը, լեքիտասարգութիւնն ու սերը,
հույսերը յերգելու պահանջը, — այնքան ավելի հաճախ և այնքան
ավելի բարձր կհնչեն նոր դասակարգային կուլտուրայի պիտե-
րների լարերը՝ ներդաշնակելով ազնվականութեան լավագոյն մասի
ստեղծած հին կուլտուրայի պիտեներին լարերին, այն կուլտու-
րայի, հանձին վորի ամբողջ ազգութեան արթնացումն էր տոնում
իր գարունը: Չարհիմով, հասարակութեան արթնացումն էր տոնում
իր գարունը մեջ բնկվող հասարակութեան ձգտումները, միջավայրը,
դեմքերը նույնպէս բոլորովին ուրիշ են, սակայն՝ պրոցեսը ընդ-
հանուր առմամբ նույնն է և լրծվում են միևնույն խնդիրները. —
ոգնել սեփական դասակարգին՝ պարզ և հասակ աչքերով նայելու
աշխարհին, կոչելու ամեն ինչ իր սեփական անունով, անխորտակի-
ւի բյուրեղներ դարձնելու հիմնական կամք-եմոցիաները, կամք-
ձգտումները Ահա թե, ըստ իս, վորտեղից և բղխում մեր մտա-
կութիւնը Պուշկինին»

Լուսնաչարսկու այս տողերը, վոր գրված են սրանից շուրջ տաս-
նարի առաջ, արդարացած են այժմ ամբողջովին: Քանի դեռ սե-
այնքան ավելի և ավելի յե մեծանում Պուշկինի նշանակութիւնը

*) А. В. Луначарский — «Литературные силы».
ГИЗ, 1925, № 67 — 71.

Ձգտել պուշկինյան պարզության, նրա խորության, նրա հմուտ-
նալ լեցունության, — ահա խնդիրներ, վոր ամենալուրջ և ամենհրա-
մայական ստեղծագործական պըռքէնն են հանդիսանում մեր ար-
դիական պոեզիայի համար:

Հարմանալի չէ, այս խիստ տեսակետից, վոր մեր ժամանակի խո-
շորագույն պոետները՝ գնալով ալիքի և ավելի մեծ և խոր պո-
ետիկ են դուրս գալիս՝ ան կատարյալ արվեստի պայծառ ակունք-
ների մոտենալու: Բնորոշ է այս կայացողութեամբ ուսուսական նո-
րագույն պոեզիայի ամենաձախ հոսանքի՝ **Լճի**՝ **հիմնադիր, հան-**
գուցյալ Վ. Մայակովսկու մի խոստովանութիւնը: Նա, վոր մի ժա-
մանակ սպառնում էր բոլոր կլասիկներին ծովը նետել հեղափո-
խութեան նավից, պատմում է, թէ ինչպէս լարված ուշադրութեամբ
լսում էր Ռուս Բրիկին, յերբ նա սկսեց կարդալ Պուշկինի «Յեկ-
զինի» մենագինը:

— Յեկ, — ասում է Մայակովսկին, — նույնիսկ անջատեցի հեռա-
խորք, վորպեսզի վոչ վոք մեղ չհասնաքիրս:

Իժպարտաբար պոետի կայանը ընդհատվեց կարիքադույն
այդ շրջադարձի կետում: Կասկած չկա, վոր հեղափոխական բուն
տեմպերամենտը, նրա առնական թափը՝ միացած պուշկինյան պար-
զության, է վիճակի կլինելիս ստեղծելու պոետական արվեստի
բարձր արժեքներ: Մեր պոետները պետք է վոր այստեղից ան-
հրաժեշտ հետեւութիւններ անեն:

Հայտնաբերաւի կողմից ձեռնարկած այս թարգմանութիւնը
բաղկացած է լինելու հինգ պոեմից, Առաջինը — Պուշկինի դրա-
մատիկական մանր յերկերը, վորոնց մեջ հանձաբեղ պոետը խո-
սում է մարդկային ամենասղգընական և խոր կրքերի մասին,
ինչպէսին են — սերը, մահը, նախանձը, ժշատութիւնը: Յերկրորդը՝
— «Բորէս Գորգուսով» պատմա-հոգեբանական տրագեդիան, յեր-
րորդը — Պուշկինի մանր բանաստեղծութիւնները, չորրորդը՝
— նրա ընտիր պոեմները և, վերջապէս, հինգերորդը — «Յեկզինի» մե-
գինը՝ չափածո վեպը:

Հասկանալի չէ ինչքին, վոր Պուշկին թարգմանելը — սովորա-
կան մի թարգմանութիւն չէ: Յեկ ձեռնարկելով այս շատ դժվա-
րին աշխատանքին, յես ամենից ավելի յեմ զգացել այն պատաս-
խանատվութեան ծանրութիւնը, վոր ստանձնել եմ, հանձն առնելով
այս պատվավոր աշխատանքը: Պուշկինի մասին շատ է խոսվել ու

գրվել: Բայց շատ շատերը դեռ մինչև այսօր ել է վիճակի չեն
հարգաւոր նրա դործերը բնագրի լեզվով: Առաջին և հիմնական
խնդիրն էր, ուրեմն, ամեն ջանք թափել, վորպեսզի բոսերենին չա-
քառեաւոր հայ ընթերցողը այս թարգմանութիւնից այնուամե-
նայնիվ պարզ գտողափար կազմեր Պուշկինի մեծութեան և հանձա-
քի մասին: Սա դուրսն լուծելի խնդիր չէ: Վասնզի ամենահա-
մարեղ թարգմանութիւնն անգամ, — ինչպէս բազմիցս ասված է,
— լավագույն դեպքում յոկ «խալիչայի թարս կողմն են» Բայց և
այնպէս, թեկուզ և մնալով այդ «թարս կողմն» սահմաններում, —
անհրաժեշտ էր անել բոլորը, ինչ վոր կարելի չէր, վորպեսզի պուշ-
կինյան պոեզիայի բոլոր տարրերը իրենց արտացոլումը դառնէին
թարգմանութեան մեջ:

Վո՞րոնք են յեղի այն սկզբունքները, վորոնցով յես դեկա-
վարիկ եմ թարգմանութեան ընթացքում:


1. Պահպանել Պուշկինի սողերի չափը, ութմը և կառույ-
վածքը:

2. Թարգմանութեան մեջ պահել սողերի նույն քանակը, ինչ
վոր կա բնագրում, ուրիշ խոսքով, այն միտքը, վորը հեղինակը
արտահայտել է, յենթադրենք յերկու և կես սողանոց Փռագում,
թարգմանել յերկու և կես սողով:

3. Հարադատութեամբ պահպանել Պուշկինի բոլոր պատկեր-
ները, համեմատութիւնները, վաճելը և վոչ մեկը այդպիսիներից
բաց չթողնել կամ՝ չփոխարինել ուրիշ՝ թեկուզ և նման պատկե-
րով:

4. Վորտեղ և վորքան այս հնարավոր է, պահպանել նաև Փո-
նետիկ (հնչյունային) նմանութիւնը, ինչպէս, որինակ. «Մոցարտ և
Մայքրել» մեջ, յերբ Մայքրելն առաջարկում է Մոցարտին գնալ
իր հետ պանդոկ՝ ձաշելու, — Մոցարտն ասում է. — «пожалуй»,
վոր յես հայերեն թարգմանել եմ «հոժար եմ»:

Այս հատորում գետեղված գործերը բոլորն ել գրված են հինգ-
վտայտ յամբերով՝ շեշտով և անշեշտով վերջավորութեամբ:
Որինակ.



Այսպես են գրված այս հատորի բոլոր յերկերը և կարգավոր
ժամանակ այս հպիտի մոռանալ յերբեք:

«Ժլատ Ստեփանը» առուներենում սկսվում է այսպես. —

„Во что' бы то' ни ста'ло, на' турни'ро
Явлю'сь я. По'кажи' мне сле'м, Иван.“

Հայերեն թարգմանություն մեջ այդ տողերը տրված են այս-
պես. —

«Ինչպես ել զոր լինի — պիտի գընամ
Տուրնիրը: Սնդավանաս տուր, Իվան:»

Միմիայն նկատի ունենալով հայերեն թարգմանություն յամ-
բական կառուցվածքը, հնարավոր է անսխալ և անուսթաք կար-
գալ այս հատորի մեջ գետնդված յերկերը:

Իսկ թե գեղարվեստորեն փոքրան հաջող և լավ են դուրս
իկել թարգմանությունները, դրա մասին, հասկանալի չէ, փո-
խորը ինձ չե պատկանում:

Տիգրան Հախումյան

Ցերեան, 1934.



Գրք 1 Ո



А. С. ПУШКИН
Драматические отрывки
Гиз ССР Армении, Ереван, 1934

ՀՀ Ազգային գրադարան



NL0319983

13.063